

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ**

Դավիթ Զամալյան

**Թուրք-ադրբեջանական
վտանգը և Հայաստանի
անվտանգության
հիմնախնդիրները**

**Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2016**

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0
Ջ 240

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը*

Խմբագիր՝ Ա. Աղաբաբյան

Դավիթ Ջամալյան

Ջ 240 Թուրք-ադրբեջանական վտանգը և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները/Դ. Ջամալյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 70 էջ:

Գրքում անդրադարձ է կատարված հայ-թուրքական հակամարտության «ցիկլային» բնույթին և դրա պատճառներին, հայ-թուրքական էթնոքաղաքական շահերի հակասության և թուրք-ադրբեջանական հանրույթներում առկա հայատյացության խնդիրներին և այդ համաշարուն Հայաստանի անվտանգությանը սպառնացող գործոններին: Գրքում հանգամանորեն ներկայացված են նաև Ադրբեջանի հետ հիմնախնդրի կարգավորման հարցում տարածքային զիջումների բացառումը հիմնավորող իրավաքաղաքական փաստարկները՝ համահունչ հայկական երկու հանրապետությունների որդեգրած քաղաքականությանը:

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0

ISBN 978-5-8084-2172-1

© ԵՊՀ հրատ., 2016
© Ջամալյան Դ. Վ., 2016

Յեղիճնակի կողմից

Հրադադարի հաստատումից ի վեր հայաստանյան հանրային գիտակցությունն հետևողականորեն ներմուծվել է Ադրբեյջանի հետ համարտությունը տարածքային գիշումներով կարգավորելու գաղափարը: ***Վերջինս մեր հանրությանը ներկայացվել է որպես կարգավորման միակ հնարավոր սկզբունք, որպես անխուսափելի մի բան:***

Կարելի է առանձնացնել առնվազն երկու՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, թե ինչու հիրավի ինքնակործան այս գաղափարը տիրապետող դարձավ ժամանակի հայաստանյան քաղաքական ղեկավարության շրջանում:

Առաջին՝ օբյեկտիվ պատճառը հայ քաղաքագիտական մտքի տհասությունն էր, նրա սաղմնային վիճակում լինելը:

Անկախությունից անմիջապես հետո, օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, Հայաստանում դեռևս զարգացած չէր «հայաստանակենտրոն» քաղաքագիտական միտքը, հստակ հայեցակարգային տեսքով շարադրված չէին պատկերացումները Հայաստան պետության ռազմավարական նպատակների, այդ նպատակներին հասնելու մարտավարական ուղիների մասին: Այլ կերպ ասած՝ չկար քաղա-

Վերջինս մեր հանրությանը ներկայացվել է որպես կարգավորման միակ հնարավոր սկզբունք, որպես անխուսափելի մի բան:

քազիտություն, որը սպասարկեր Հայաստանի պետական շահերը, դրանք հիմնավորող տեսություններ ձևավորեր: Ինչո՞ւ օբյեկտիվորեն, որովհետև տասնամյակներ շարունակ հայոց պետականության բացակայության պայմաններում հայաստանակենտրոն քաղաքագիտական միտք զարգանալ պարզապես չէր կարող: Բացի այդ, հանգամանորեն ուսումնասիրված չէին նաև նմանաբնույթ հակամարտությունների կարգավորման համաշխարհային փորձն ու 1918-1920 թթ. Առաջին Հանրապետության դիվանագիտական, քաղաքական պատմությունը: Եվ թերևս ամենակարևորը՝ վերաիմաստավորված չէր հայ-թուրքական հարաբերությունների փորձը: Մասնավորապես՝ ակնհայտ է, որ նորանկախ Հայաստանի բարձրագույն քաղաքական ղեկավարությունն ըստ էության հստակորեն չէր գիտակցում հայության՝ որպես հավաքականության ձախողումների ռազմական, դիվանագիտական, հոգեբանական պատճառները, ինչը չի կարելի ասել ռազմական ղեկավարության մասին:

Երկրորդ՝ սուբյեկտիվ պատճառն այն ժամանակվա քաղաքական ղեկավարության սեփական ուժերի հանդեպ թերահավատությունն էր, որից էլ ածանցյալ էին համարձակ գաղափարներ իդանալու նրանց անկարողությունն ու, ինչն առավել վտանգավոր է, թուրքին հող գիջելով, ազգային նվիրական գաղափարներից ի շահ թուրքի հրաժարվելու գնով խաղաղ հեռանկար հաստատելու պատրանքին տրվելը: Որպես հետևանք՝ տարածքներ չհանձնելու գաղափարը որակվում էր

որպես ծայրահեղականություն և արկածախնդրություն, իսկ այդ գաղափարի կրողները՝ որպես կա՛մ ռոմանտիկներ, կա՛մ բախտախնդիրներ: Փոխարենը՝ պարտվողականությունը ներկայացվում էր որպես պրագմատիզմ:

Եվ ահա, ողջ վերը նշվածի հետևանքը եղավ այն, որ հրադադարի հաստատումից հետո Հայաստանի նախկին քաղաքական ղեկավարությունն ի գորու չեղավ տարածք չգիջելու գաղափարի հենքի վրա ձևավորել հականարտության կարգավորման հիրավի հայանպաստ ռազմավարություն: Դա իր հերթին հանգեցրեց նրան, որ մեզանում տևականորեն չէր տարվում պետականորեն հովանավորվող գիտահետազոտական աշխատանք՝ տարածքներ չհանձնելու իրավաքաղաքական փաստարկների ձևակերպման նպատակով:

Այս տարիներին տարածքային զիջումների գաղափարը թեև համակեց մեր հասարակության որոշ մասին, սակայն այդպես էլ տիրապետող չդարձավ: Ավելին՝ տարիներ շարունակ հայաստանյան հասարակության մի զգալի հատվածը, գիտակցելով տարածքային զիջումների ողջ վտանգավորությունը մեր հայրենիքի համար, ընդդիմանում էր այդ գաղափարին: Այդ ընդդիմությունն արտահայտվում էր միանգամայն առողջ այն հակափաստարկով, թե տղերքի արյամբ ազատագրված հայրենիքը սակարկելի չէ: Այդ հակափաստարկը, թեև լինելով հոգեբանորեն առողջ, այդուհանդերձ, արտահայտում էր խնդրի միայն բարոյական կողմը:

Տարածքային զիջումների անթույլատրելի լի-

նելու հանրային դիրքորոշումն ավելի ամրապնդելու, այն համատարած դարձնելու նպատակով անհրաժեշտ էր հանրային ընկալումներում հասունացնել «ոչ մի թիզ հող» սկզբունքը հիմնավորող փաստարկները: Եվ ահա, վերջին տարիներին հայոց քաղաքագիտական միտքը ստեղծեց այդպիսիք: Արդյունքում մեր հասարակությունն այսօր առավել քան երբևէ անհանդուրժող է տարածք հանձնելու գաղափարի հանդեպ. այն այժմ ընկալվում է որպես ծայրահեղականություն: Ակնհայտ է, որ տարածք հանձնելու կողմնակիցները մեզանում աննշան փոքրամասնություն են կազմում: Ու թեև ներկայումս ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ են «հանձնողական» տեսակետն ընկալում որպես անընդունելի, ծայրահեղական, ավելին՝ «հանձնողական» տեսակետի կողմնակիցները, վախենալով վարկաբեկվելուց, հակված են հրապարակավ չարտահայտելու իրենց այդ դիրքորոշումը, այդուհանդերձ, հարկավոր է կայուն պարբերականությամբ ապացուցել «ոչ մի թիզ հող» գաղափարի կենսական նշանակություն ունենալը մեզ համար: Մանրամասները:

«Ոչ մի թիզ հող» դիրքորոշումը հանրային գիտակցության մեջ ամրապնդելու ուղղությամբ աշխատանքները պետք է տարվեն անընդհատ, առաջին հերթին՝ հետևյալ նպատակով: Բանն այն է, որ տարածքային զիջումների հանդեպ հանրային համատարած ժխտողականությունը քաղաքական այն լրջագույն ռեսուրսն է, որը հարկավոր է ձևավորել երկրի ռազմաքաղաքական բարձրագույն ղեկավարության համար՝ խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված բա-

նակցություններում պետական շահն առավել դյուրին պաշտպանելու նպատակով: Հանրության շրջանում որպես հակամարտության կարգավորման միակ ընդունելի պետք է ընկալվի հետևյալ տարբերակը.

Արցախը ՊԵՏԲ է մնա հայադասկան իր ներկայիս սահմաններում, քանզի հակամարտությունն Ադրբեջանի հետ ունի անընդհատ բնույթ, և ըստ այդմ՝ միայն Արցախի ներկա տարածքն է հուսալի խաղաղության երաշխիքը:

Արցախը պետք է մնա հայապատկան իր ներկայիս սահմաններում, քանզի հակամարտությունն Ադրբեջանի հետ ունի անընդհատ բնույթ, և ըստ այդմ՝ միայն Արցախի ներկա տարածքն է հուսալի խաղաղության երաշխիքը:

Սալի խաղաղության երաշխիքը: Հայաստանյան լսարանի համար պետք է ամերկբա լինի, որ անդրկովկասցի թուրքերի՝ այսպես կոչված ադրբեջանցիների¹ կայսրական նկրտումները տեղի չեն տվել, և որ կարգավորում ասելով՝ նրանք հասկանում են վերադարձ 1988 թ. իրողություններին: Հատկապես ընդգծենք, որ անգիջում առավելապաշտական դիրքորոշումները միշտ բնորոշ են եղել ադրբեջանական հանրության ճնշող մեծամասնությանը, ալիևյան քարոզչությունն ընդամենը սրել է դրանք:

Այս առումով հատկապես կարևոր է աշխատանքը երիտասարդության հետ: Հարկ է երիտասարդների ակտիվությունը, համարձակ

¹ Մեթոդաբանորեն սխալ է ժամանակակից Ադրբեջանի տիրապետող էթնիկական միավորին անվանել «ադրբեջանցիներ», քանզի նման էթնանունով էթնիկական հանրույթ պարզապես գոյություն չունի: Տվյալ դեպքում խոսքն ընդամենը թուրքական էթնիկական միավորի առանձին ճյուղի մասին է: Այլ հարց է, որ ժամանակակից Ադրբեջանում հետևողականորեն տարվում է ադրբեջանցիների՝ որպես առանձին էթնիկական հանրության «ինքնության կայացման» քաղաքականություն, ինչն առանձին հետազոտության խնդիր է:

գաղափարներ արտահայտելու նրանց ներքին ձգտումն ուղղորդել «*ոչ մի թիզ հող*» գաղափարը տարածելու ուղղությամբ:

Արդյո՞ք բանակցությունների առարկա հանդիսացող «մադրիդյան սկզբունքների» հենքի վրա իսկապես հնարավոր է կարգավորել հայ-ադրբեջանական հակամարտությունը:

Եվ այսպես. Ադրբեջանի հետ հակամարտության ներկա փուլում, երբ բանակցային գործընթացի առարկան կարգավորման հիմնարար սկզբունքներն են, հայկական երկու կողմերի համար խիստ արդիական է դառնում

այդ կարգավորման գոյություն ունեցող մեթոդաբանության արմատական փոխակերպումը: Այդ փոխակերպումը պետք է սահուն անցում լինի տարածքներ զիջելով հակամարտությունը կարգավորելու սցենարից տարածքներ չհանձնելով կարգավորելու սցենարին: Վերը նշվածը, անշուշտ, բարդ, սակայն իրականանալի խնդիր է: Ավելին՝ այդ խնդիրը մենք ստիպված ենք լուծել, քանզի մեզ համար տարածքներ չհանձնելու սցենարի այլընտրանք սկզբունքորեն չկա:

...մադրիդյան սկզբունքները վտանգում են հայապատկան Հայաստանի՝ ՀՀ-ի և Արցախի անվտանգությունը և հակամարտության կարգավորման և խաղաղ ապագայի փոխարեն հասունացնում նոր պատերազմը:

Այս համատեքստում կատարենք հետևյալ հարցադրումը. ***արդյո՞ք բանակցությունների առարկա հանդիսացող «մադրիդյան սկզբունքների» հենքի վրա իսկապես հնարավոր է կարգավորել հայ-ադրբեջանական հակամարտությունը:***

Մեր համոզմամբ՝ պատասխանն ակնհայտ է՝ ոչ. մադրիդյան սկզբունքներով անհնարին են բառի բուն իմաստով կարգավորել հայ-ադրբեջանական հակամարտությունը:

Մադրիդյան սկզբունքների կենսագործման դեպքում ընդամենը կփոփոխվեն ներկա ռազմաքաղաքական իրողությունները, ստատուս–քվոն: Այդ փոփոխությունը, սակայն, հակամարտության կարգավորում անվանել չի կարելի, քանզի այդ պարագայում հայկական կողմը շեշտակիորեն կթուլանա, որով ադրբեջանական ռազմական ագրեսիայի համար խիստ բարենպաստ պայմաններ կստեղծվեն: Ըստ այդմ՝ **մադրիդյան սկզբունքները վճանգում են հայադասկան Հայաստանի՝ ՀՀ-ի և Արցախի անվճանգությունը և հակամարտության կարգավորման և խաղաղ ադազայի փոխարեն հասունացնում նոր տատանումներ:** Հետևաբար՝ **Հայաստանի տեսության կենսունակությունը հնարավոր է ադախովել միմիայն ազատագրված Արցախի 11.432 քառակուսի կիլոմետր տարածքի հայապատկանության դեպքում:**

Հայաստան պետության կենսունակությունը հնարավոր է ապահովել միմիայն ազատագրված Արցախի 11.432 քառակուսի կիլոմետր տարածքի հայապատկանության դեպքում:

Սույն աշխատանքում մենք կներկայացնենք տարածքային զիջումների բացառումը հիմնավորող իրավաքաղաքական, ռազմաքաղաքական, էթնոքաղաքական, էթնոհոգեբանական առանցքային փաստարկները:

1. Հայ-թուրքական հակամարտության «ցիկլային» բնույթը

Խնդրո առարկայի համատեքստում կատարենք հետևյալ երկու հարցադրումը.

ա) *արդյո՞ք հայության և անդրկովկասցի թուրքեր միջև հակամարտության միակ տատանումն Արցախն է,*

բ) *տարածքային զիջումների սցենարով Արցախյան հակամարտության կարգավորմամբ արդյո՞ք կվերանա Հայաստանի և Ադրբեջանի էթնոքաղաքական շահերի միջև առկա հակասությունը, արդյո՞ք երկու դեպքերումն էլ միջև կհաստատվի խաղաղ, բարիդրացիական համագործակցություն:*

Մեր համոզմամբ՝ սկզբունքորեն սխալ է

Արցախի տարածքը դիտարկել որպես հայության և անդրկովկասցի թուրքերի միջև առկա հակամարտության միակ պատճառ:

Սկզբունքորեն սխալ է նաև այն տեսակետը, թե տարածքային զիջումների արդյունքում ձեռք բերված համաձայնությամբ հայության և անդրկովկասցի թուրքերի միջև առկա էթնոքաղաքական հակասությունները կվերանան: Ավելին՝ մեր համոզմամբ՝ անգամ Ադրբեջանի

ա) Արդյո՞ք հայության և անդրկովկասցի թուրքեր միջև հակամարտության միակ պատճառն Արցախն է,

բ) տարածքային զիջումների սցենարով Արցախյան հակամարտության կարգավորմամբ արդյո՞ք կվերանա Հայաստանի և Ադրբեջանի էթնոքաղաքական շահերի միջև առկա հակասությունը, արդյո՞ք երկու պետությունների միջև կհաստատվի խաղաղ, բարիդրացիական համագործակցություն:

առավելապաշտական նկրտումների լիակատար բավարարման՝ Արցախն Ադրբեջանին հանձնելու դեպքում² Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա էթնոքաղաքական հակասությունները ոչ միայն չեն վերանա, այլ ընդհակառակը՝ թևակոխելով նոր փուլ՝ է՛լ ավելի կխորանան: Փորձենք հիմնավորել այս տեսակետը:

Արցախյան հակամարտությունը հարկ է դիտարկել իբրև հայ-թուրքական էթնոֆաղափական արմատական հակասությունների մասնավոր դրսևորում, որն արդիական է սվյալ լիցիայի տասնական ժամանակահատվածում: Ընդ որում՝ իր հենց այդ արմատականության լիցիայի տասնական հակամարտությունն ունի շարունակական բնույթ և ժամանակ առ ժամանակ «ցիկլային» սրամաքանությանը այժմեական դառնալու կայուն միտում:

Կարելի է առանձնացնել հայ-թուրքական հակամարտության ցիկլային բնույթը պայմանավորող երկու հիմնական պատճառ՝ **էթնոֆաղափական շահերի արմատական հակասականությունը և հայերի ու թուրքերի միջև ֆաղափակրթական անհամատեղելիությունը:**

Ամբողջացնելով ողջ վերը նշվածը՝ հանգում ենք հետևության առ այն, որ **հայ-թուրքական**

Արցախյան հակամարտությունը հարկ է դիտարկել իբրև հայ-թուրքական էթնոֆաղափական արմատական հակասությունների մասնավոր դրսևորում, որն արդիական է սվյալ լիցիայի տասնական ժամանակահատվածում: Ընդ որում՝ իր հենց այդ արմատականության լիցիայի տասնական հակամարտությունն ունի շարունակական բնույթ և ժամանակ առ ժամանակ «ցիկլային» սրամաքանությանը այժմեական դառնալու կայուն միտում:

² Բնականաբար, այդ սցենարի կենսագործումը չի կարելի համարել կարգավորում՝ բառի բուն իմաստով:

...հայ-թուրքական հակասությունների արմատականությունը, շահերի իրարամերժությունը, քաղաքակրթական անհամատեղելիությամբ պայմանավորված թշնամանքի կայուն լինելը պայմանավորում են հակամարտության ցիկլայնությունը: Այս համատեքստում Արցախի տարածքը հարկ է դիտարկել որպես հայ - թուրքական հակամարտության հերթական ցիկլի պատճառ: Հետևաբար՝ այս իրողությունից ելնելով ակնհայտ է դառնում հետևյալը. Արցախի տարածքին տիրապետելը հակամարտող կողմերից յուրաքանչյուրին տալիս է ժամանակի մեջ երկարաձգված հակամարտությունում դիմացինի հանդեպ «մրցակցային ռազմավարական առավելություն»:

հակասությունների արմատականությունը, շահերի իրարամերժությունը, քաղաքակրթական անհամատեղելիությամբ պայմանավորված թշնամանքի կայուն լինելը պայմանավորում են հակամարտության ցիկլայնությունը: Այս համատեքստում Արցախի տարածքը հարկ է դիտարկել որպես հայ - թուրքական հակամարտության հերթական ցիկլի պատճառ: Հետևաբար՝ այս իրողությունից ելնելով ակնհայտ է դառնում հետևյալը. Արցախի տարածքին տիրապետելը հակամարտող կողմերից յուրաքանչյուրին տալիս է ժամանակի մեջ երկարաձգված հակամարտությունում դիմացինի հանդեպ «մրցակցային

ռազմավարական առավելություն»:

Տվյալ դեպքում «հայ-թուրքական» ձևակերպման մեջ մենք ներառում ենք նաև Ադրբեջանի հետ առկա վիճահարույց խնդիրները, քանզի ելնում ենք այն համոզմունքից, որ Թուրքիայի և Ադրբեջանի էթնոքաղաքական հեռահար շահերն ու ռազմավարական նպատակները նույնական են: Այդպես է, քանզի 98 տարվա պատմությունն ունեցող Ադրբեջան պետությունն ընդամենը թուրքական նախագիծ է, թուրքական հեռահար նվաճողական նկրտումների իրականացման մի փուլ: Եվ քանի դեռ Ադրբեջան պե-

տության տիրապետող էթնիկական հանրույթը նախկին կովկասյան թաթարները կամ անդրկովկասցի թուրքերն են, Ադրբեջանի և Թուրքիայի միջև կարող են լինել միայն մարտավարական բնույթի հակասություններ: Ուստի՝ Թուրքիան պակաս շահագրգռված է Արցախի տարածքի զավթմամբ, այլ կերպ՝ թրքացմամբ, քան պաշտոնական Բաքուն: Նշենք, որ ռազմավարական բնույթի էթնոքաղաքական շահերի բախում Թուրքիայի և Ադրբեջանի միջև հնարավոր է միայն այն դեպքում, երբ Ադրբեջանի քրդացման գործընթացը, որ՝ սկիզբ է առել ալիևյան կլանի իշխանության օրոք և ներկայումս հարաճուն տեմպերով շարունակվում է, հասնի այնպիսի մասշտաբների, որ էապես փոխի այդ պետության էթնիկական դիմագիծը: Այսօր, սակայն, Ադրբեջանի էթնիկական դիմագիծը թուրքական է՝ դրանից բխող բոլոր հետևություններով հանդերձ:

Այժմ հանգամանորեն անդրադառնանք հայ-թուրքական հակամարտության ցիկլային բնույթը պայմանավորող պատճառներից յուրաքանչյուրին:

1.1. Էթնոքաղաքական շահերի հակասականությունը՝ հայ-թուրքական հակամարտության ցիկլայնության պատճառ

Հայ-թուրքական հակամարտության ցիկլայնության ակնառու ապացույցներից է, այսպես կոչված, «Նախիջևանի գործոնը»:

Ակնհայտ է, որ **Ադրբեջանի տեղական կազմավորման ռազմավարական նոստալգիայից մեկը՝ Նախիջևանի անկլավային վիճակը վերացնելն է:** Հետևաբար՝ պաշտոնական Բաքվի ներկայիս առավելապաշտությունը բնավ չի սահմանափակվում ողջ ազատագրված Արցախին վերատիրանալու ցանկությամբ:

...Ադրբեջանի տեղական կազմավորման ռազմավարական նպատակներից մեկը Նախիջևանի անկլավային վիճակը վերացնելն է:

Վերջինս ենթադրում է նաև ՀՀ Սյունիքի մարզի բռնազավթում՝ Նախիջևանը հուսալի ցամաքային կապով «մայր» Ադրբեջանին միավորելու նպատակով:

Այսօր այդ մասին բաց տեքստով դեռևս չի խոսվում: Ներկայումս ալիևյան վերնախավը դեռևս փորձում է հիմնավորել Սյունիքի վրա Ադրբեջանի «պատմական» հավակնությունները: Սակայն Արցախը կամ նրա՝ սահմանադրորեն ամրագրված տարածքի մի մասը ստանալու պարագայում Նախիջևանի անկլավային վիճակը վերացնելու նպատակը կդառնա իրականացելի, հետևապես՝ արդիական: Հետևաբար՝ **Նախիջևանի գործոնն անհնարին է դարձնում Արցախի սահմանադրորեն ամրագրված տարածքների որոշ մասի զիջման գնով հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավոր-**

րունը բառի բուն իմաստով: Ընդ որում՝ որքան շատ լինեն այդ տարածքային գիջումները, այնքան ավելի իրատեսական կդառնա Նախիջևանի անկլավային վիճակը վերացնելու Ադրբեջանի սցենարը:

Կարծում եմք, որ նաև այս համատեքստում է հարկավոր դիտարկել Ադրբեջանի զինված ուժերի՝ Նախիջևանում տեղակայված 5-րդ բանակային զորամիավորումը որպես առանձին համագորային բանակ վերակազմավորելը: Ընդ որում՝ տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե զուտ անվանափոխության, այլ Նախիջևանում ավելի մեծաքանակ զինուժ ունենալու նպատակի հետ: Արդեն այսօր Նախիջևանը վերածվել է ՀՀ-ի դեմ ագրեսիայի պլացդարմի, ինչի վկայությունն այն տեղ հեռահար խոցման հրետանային միջոցների տեղակայումն է: Ավելին՝ պետք է ակնկալել, որ առաջիկայում նախկին զորամիավորման խոշորացման նպատակով տեղի կունենան համապատասխան կազմ-հաստիքային փոփոխություններ:

Ելնելով Նախիջևանի գործոնից՝ ուրվագծվում է նաև արցախյան հակամարտության կարգավորման մեթոդաբանությունը: Մասնավորապես՝ **արցախյան հակամարտության կարգավորման արդյունքում երբևէ չոլեսք է ստեղծվեն այնպիսի աշխարհաքաղաքական պայմաններ, որոնք Նախիջևանի անկլավային վիճակն ուժային սցենարով վերացնելու հրապուրանք կառաջացնեն Ադրբեջանի ռազմաքաղաքական դեկավարության մոտ:**

...Նախիջևանի գործոնն անհնարին է դարձնում Արցախի սահմանադրորեն ամրագրված տարածքների որոշ մասի գիջման զնով հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը բառի բուն իմաստով:

...արցախյան հակամարտության կարգավորման արդյունքում երբևէ չպետք է ստեղծվեն այնպիսի աշխարհաքաղաքական պայմաններ, որոնք Նախիջևանի անկլավային վիճակն ուժային սցենարով վերացնելու հրապուրանք կառաջացնեն Ադրբեջանի ռազմաքաղաքական դեկավարության մոտ:

հաղափական տայմաններ, որոնք Նախիջևանի անկլավային վիճակն ուժային սցենարով վերացնելու հրադուրանք կառաջացնեն Ադրբեջանի ռազմափառական դեկավարության մոտ:

Մինչդեռ տարածքային զիջումների դեպքում այդ հեռանկարը դառնում է միանգամայն իրական: Ներկայիս իրողությունները նման զարգացումները դարձնում են անիրականանալի և հենց այդ առումով էլ հուսալի խաղաղություն են ապահովում: Հետևաբար՝ Արցախի սահմանադրորեն ամրագրված տարածքների մի մա-

Նախիջևանի թրքապատկանությունն իրավամբ կարելի է որակել որպես Հայաստանի անվտանգության սպառնալիք:

սի, առավել ևս ողջ Արցախի հանձնումը միմիայն կխթանի հայ-ադրբեջանական հակամարտությունը՝ ի վերջո հանգեցնելով նոր պատերազմի: Հետևաբար՝

տարածքային զիջումների տրամաբանությունը կարելի է բնորոշել որպես «մեկ ֆայլ ընդառաջ դեռի լաշերազմը»: Ի դեպ, այստեղից ածանցվում է մեկ այլ կարևոր հետևություն ևս. ***Նախիջևանի թրքապատկանությունն իրավամբ կարելի է որակել որպես Հայաստանի անվտանգության սպառնալիք:***

Այսպիսով՝ ելնելով հայ-թուրքական հակամարտության շարունակականության իրողությունից՝ հանգում ենք հետևության առ այն, որ ***արցախյան հակամարտության կարգավորման, այսպես կոչված, «հանձնողական» կամ «փոխզիջումային» սցենարները չեն կարող հանգեցնել ՀՀ-ի և Ադրբեջանի միջև հաճախական: Ավելին՝ այդ սցենարների կենսագործման***

**դեռիմում առաջին տղան կնդվի հայ-թուրքադր-
բեջանական հակամարտության շարունակա-
կանության ժամանակային առումով հաջորդ՝
«Նախիջևանյան» ցիկլը:**

Այսպիսով՝ մադրիդյան սկզբունքների կենսա-
գործման դեպքում անհնարին կլինի ապահովել
Արցախի հայապատկանությունը. Արցախը նախ-
կին ԼՂԻՄ-ի սահմաններում կենսունակ լինել
չի կարող: Ադրբեջանական բանակի ներկայիս
սպառազինական պոտենցիալը
հաշվի առնելով՝ այդպիսի սահ-
մաններով Արցախը պաշտպա-
նելն էապես կբարդանա:

Արաքսի հովտի կորստով
թուրք-ադրբեջանական ռազմա-
կան ագրեսիան կսպառնա Սյու-
նիքի մարզին, քանզի նպաստա-
վոր պայմաններ կստեղծվեն՝
Նախիջևանի անկլավային վիճա-
կը վերացնելու համար:

ՀՀ-ի տարածքի, մասնավո-
րապես՝ Սյունիքի մարզի հանդեպ
Ադրբեջանի նախագահի մակար-
դակով հնչեցվող հավակնությունները, զուգա-
հեռաբար՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապե-
տությունում ռազմական ներուժն ավելացնելուն
ուղղված հետևողական ջանքերն ու սպառազի-
նությունների կուտակման հարաճուն տեմպե-
րը լրջագույնս վտանգում են ՀՀ-ի ռազմական
անվտանգությունը և հետևաբար՝ անհնարին ու
անթույլատրելի դարձնում որևէ տարածքային
զիջում:

...արցախյան հակամարտու-
թյան կարգավորման, այսպես
կոչված, «հանձնողական»
կամ «փոխզիջումային» սցե-
նարները չեն կարող հանգեց-
նել ՀՀ-ի և Ադրբեջանի միջև
հաշտության: Ավելին՝ այդ
սցենարների կենսագործման
դեպքում առաջին պլան կնդվի
հայ-թուրքադրբեջանական
հակամարտության շարունա-
կականության ժամանակա-
յին առումով հաջորդ՝ «Նա-
խիջևանյան» ցիկլը:

1.2. Հայերի և թուրքերի միջև քաղաքակրթական անհամատեղելիության հիմնախնդիրն ու հայ-թուրքական հակամարտության ցիկլայնությունը

Առավել քան ակնհայտ է, որ *հայերի և անդրկովկասցի թուրքերի միջև առկա է բացահայտ քաղաքակրթական անհամատեղելիություն*: Աչքի զարնող, բացահայտ էթնիկական այդ անհամատեղելիությունն ուղղակի անհնարին է դարձնում այս երկու էթնիկական հանրությունների համատեղ գոյակցությունը միևնույն պետության սահմաններում:

Տվյալ դեպքում հարկ է շեշտել, որ ի ցույց դնելով քաղաքակրթական անհամատեղելիության փաստը՝ մենք ընդամենն ընդգծում ենք այս երկու էթնիկական հանրությունների աշխարհընկալման, էթնիկական հոգեկերտվածքի տարբերությունները, տարբերություններ, որոնք թույլ

...հայերի և անդրկովկասցի թուրքերի միջև առկա է բացահայտ քաղաքակրթական անհամատեղելիություն:

չեն տալիս այս երկու հանրություններին լիարժեքորեն ինտեգրվել միևնույն պետության մեջ, համատեղ ձևավորել ընդհանուր հանրություն: Առավել քան ակնհայտ է, որ *թուրքերի ստեղծած լեռնական կազմավորման մեջ եթե անգամ հայությունը գոյություն ունենա, առաջին հայն ուղղահայաց փոխամասնություն, այսինքն՝ ուղղահայաց էթնիկական հարաբերությունների համակարգում ստորադասված դիրքում՝ ենթարկվելով ամենասարբեր հիմնականությունների՝ ընդհուպ մինչև ֆիզի-*

կական բռնության³: Իսկ, ինչպես գիտենք, ժամանակակից սոցիալական գիտություններում «ազգային փոքրամասնություն» եզրով բնորոշում են որևէ պետության կազմում գտնվող էթնիկական հանրության ո՛չ թե քանակապես փոքրաթիվ լինելու փաստը, այլ ուղղահայաց էթնիկական հարաբերությունների աստիճանակարգում ստորադասված դիրք ունենալու հանգամանք՝ ու ըստ այդմ՝ տարաբնույթ խտրականությունների ենթարկվելը:

...թուրքերի ստեղծած պետական կազմավորման մեջ եթե անգամ հայությունը գոյություն ունենա, ապա միայն որպես ազգային փոքրամասնություն, այսինքն՝ ուղղահայաց էթնիկական հարաբերությունների համակարգում ստորադասված դիրքում՝ ենթարկվելով ամենատարբեր տիպի խտրականությունների՝ ընդհուպ մինչև ֆիզիկական բռնության:

³ Ասվածի վառ ապացույցներից է այն, որ թեև ներկայիս հանրապետական Թուրքիայում գոյություն ունի որպես կրոնական համայնք գրանցված հայություն, այդուհանդերձ, Թուրքիայի զինված ուժերի համակարգում չկա գեթ մեկ հայ, ով կզբաղեցներ բարձր և պատասխանատու զինվորական պաշտոն: Տվյալ դեպքում մենք միտումնավոր ենք որպես օրինակ բերում հենց Թուրքիայի զինված ուժերը, քանզի այստեղ ավանդաբար զինվորականությունն ընկալվել է որպես բարձր սոցիալական դիրքի կրող: Հորիզոնական, այսինքն՝ իրավահավասար էթնիկական հարաբերությունների առկայության դեպքում այդ հարգի կառույցին անդամակցելու պոտենցիալ հնարավորություն ընձեռվում է նաև տվյալ երկիրում բնակվող այլ ազգերի ներկայացուցիչներին, մի բան, որ ժամանակակից Թուրքիայում անգամ պատկերացնելն է անհնարին: Մինչդեռ մի շարք այլ երկրներում, որտեղ նույնպես գոյություն ունի հայ համայնք, բայց որտեղ վերջինս լիովին ինտեգրված է տվյալ երկրի հասարակությունում և զբաղեցնում է հորիզոնական՝ իրավահավասար էթնիկական դիրք, օրինակ՝ Ռուսաստանում, Լիբանանում, Չիլիում, ազգությամբ հայերը, չթաքցնելով սեփական ազգային պատկանելիությունը, զբաղեցնում են բարձր զինվորական պաշտոններ:

...Ադրբեջանում առկա հայատյացության և մասնավորապես՝ Ռամիլ Սաֆարովի հերոսացման փաստը՝ որպես ՀՀ-ի և Արցախի համար սպառնալիք լինելու...

Թուրքերի հետ քաղաքակրթական անհամատեղելիության հանգամանքը նպատակահարմար է բնորոշել **«*ֆաղափակրթական բախում*»** եզրով:

Եվս մեկ կարևոր հանգամանք. եթե մեզ՝ հայերիս համար թուրքերի հետ քաղաքակրթական անհամատեղելիությունն ինքնընտանրան հասկանալի է, ապա աշխարհին այս աներկբա ճշմարտությունն ակնառու դարձնելու համար այն անհրաժեշտ է փաստարկված հիմնավորել: Որպես այդպիսի հիմնավորում՝ տեղին է բերել **Ադրբեջանում առկա հայատյացության և մասնավորապես՝ Ռամիլ Սաֆարովի հերոսացման փաստը՝ որպես ՀՀ-ի և Արցախի համար սպառնալիք լինելու** թեզը:

Հայատյացությունը սոցիոլոգիական տվյալներում

Ադրբեջանում առկա հայատյացության մթնոլորտի վերաբերյալ հստակ պատկերացում կարելի է կազմել 2005 թ. Հետաքննող լրագրողների «Ռեզիոն» հետազոտական կենտրոնի կողմից հրապարակված «Армения и Азербайджан на перепутье «ни мира, ни войны»» ուսումնասիրությանը ծանոթանալիս: Այստեղ բերված են հետաքրքիր տվյալներ երկու հասարակությունների փոխադարձ հանդուրժողականության մակարդակի վերաբերյալ: Այդ նպատակով հարցումներ են անցկացվել և՛ Ադրբեջանում, և՛

Հայաստանում: Յուրաքանչյուր երկրում հարցման է ենթարկվել 1000-ական մարդ:

Պարզվում է, որ Ադրբեջանում հարցման 1000 մասնակիցների 93,5%-ը Հայաստանը համարում է թշնամի երկիր: Պարզվել է նաև, որ հարցման մասնակիցների 85,1%-ը հայերին արհամարհում է, 76,9%-ը հայերի հանդեպ համակված է զայրույթով, իսկ 41,6%-ը՝ անթաքույց ատելությամբ⁴: Անցել է տասնմեկ տարի, և Ադրբեջանում կարծես թե ոչինչ չի փոխվել. հայատյացության քարոզչությունը շարունակվում է նույն թափով, ինչը նշանակում է, որ անդրկովկասցի թուրքերի մոտ հայատյացության դիրքորոշումներն ավելի են արմատավորվել:

Այստեղ հատուկ ուշադրության է արժանի հարցման մասնակիցների 85,1%-ի կողմից հայերին արհամարհելու փաստը:

Ապացուցված է, որ արհամարհանքը հաճախ առաջանում է ո՛չ թե առանձին, մեկուսացված, այլ կա՛մ զայրույթի, կա՛մ զգվանքի և կա՛մ էլ երկուսի հետ միաժամանակ: Այս երեք հույզերի խումբը հոգեբաններն անվանում են «թշնամական եռյակ»: Հետևաբար՝ վերը նշված հետազոտության արդյունքներն ակնհայտորեն վկայում են, որ ադրբեջանական հասարակության ճնշող մեծամասնությունը հայության հանդեպ համակված է թշնամանքով: Ի դեպ, ուշադրության է արժանի հույզերի հոգեբանության ամերիկյան անվանի հետազոտող Քերոլ Իզարդի հետևյալ

⁴ Армения и Азербайджан на перепутье “ни мира, ни войны”, Ереван, Исследовательский центр “Регион” Журналов-исследователей, 2005.

համոզմունքը, որ «բոլոր, այսպես կոչված՝ «սառնարտորեն» կատարված սպանություններն արհամարհանքի հետևանք են»⁵:

Համաձայն Քերոլ Իզարդի հետազոտությունների՝ պարզվել է, որ արհամարհանքը սերտորեն կապված է գերազանցության զգացողության հետ: Բանն այն է, որ եթե մարդ արհամարհում է որևէ մեկին, ապա վերջինիս համարում է ցածրակարգ, մարդկային որակներից զուրկ մեկը, որին վնասելու մեջ դատապարտելի ոչինչ չի տեսնում: Արհամարհանքը դյուրացնում է բռնության գործադրումը, հոգեբանական տարածություն ստեղծում ագրեսորի և զոհի միջև՝ ազատելով ագրեսորին իր բռնարարքի համար բարոյական ապրումներից առաջին հերթին՝ մեղքի և ամոթի զգացումներից: Պատահական չէ, որ հիտլերյան քարոզչությունը հրեաներին, սլավոններին, գնչուներին հռչակում էր «ենթամարդիկ», ցածրակարգ ռասսա՝ այդ կերպ գերմանական հասարակության և բանակի անձնակազմի մոտ խորն արհամարհանք առաջացնելով նրանց հանդեպ: Հետևաբար՝ արհամարհանքը վայրագության հոգեբանական նախադրյալներից է: Եվ ուրեմն՝ թշնամանքը, անկախ այն բանից, թե ում դեմ է այն ուղղված, հուզական բարդույթ է, զգացմունք, որի կառուցվածքային բաղադրիչներից մեկն արհամարհանքն է: Այլ կերպ ասած՝ որևէ մեկի հանդեպ վառ արտահայտված արհամարհանքը վկայում է նրա հանդեպ թշնամանքի առկայության մասին: Այսպիսով՝ հետևությունը

⁵ Керрол Э. Изард, Психология эмоций, СПб, 1999, стр. 290.

մեկն է. անդրկովկասի թուրքերի հանրությունը պատրաստ է կրկնել Սումգայիթի ջարդերը, եթե, իհարկե, հայությունը թուլանա և կորցնի իր զգոնությունը:

Հայատյացության դրսևորումներն անդրկովկասի թուրքերի բանահյուսությունում

Ժողովրդական բանահյուսությունն ազգի հոգեկերտվածքի հայելին է: Ասացվածքները ժողովրդական բանահյուսության մասն են կազմում: Ժամանակակից հոգեբանական գիտության դիրքերից՝ ասացվածքն էթնիկական դիրքորոշման տեսակ է: Իսկ էթնիկական դիրքորոշումն ասելով հարկ է հասկանալ այնպիսի հոգեբանական կազմավորում, որը բնորոշ է տվյալ հանրության անդամների մեծամասնությանը, կազմավորում, որը նախորդում է գործունեությանը, պայմանավորում, ուղղորդում նրա ընթացքը, իմաստավորում է այն: Ասացվածքներում կարելի է տեսնել ազգի իդէերը, նպատակները: Ինչպես մյուս բոլոր դիրքորոշումները, ասացվածքները մոտիվացնում և կանխորոշում են ազգի մեծ մասի գործունեությունը: Ասացվածքը՝ իբրև էթնիկական դիրքորոշում, միաժամանակ նաև էթնիկական սոցիալականացման միջոց է, այն ձևավորում է աշխարհայացք, համոզմունքներ: Իմանալ տվյալ էթնոսի ժողովրդական բանահյուսությունը, ասացվածքները նշանակում է կանխատեսել այդ էթնոսի ներկայացուցիչների հնարավոր

վարքը տարբեր խնդրահարույց իրավիճակներում:

Պատկերացնելու համար, թե ինչ խորն արմատներ ունի հայատյացությունը թուրքական, նաև անդրկովկասցի թուրքերի հոգեկերտվածքում, հարկավոր է ուսումնասիրել հայերի վերաբերյալ նրանց ասացվածքները: Ստորև կհամեմատենք թուրքերի մասին հայոց

ասացվածքները հայերի մասին թուրքերի ասացվածքների հետ: Նման համեմատական հետազոտությունը թույլ է տալիս իրատեսական պատկերացում կազմել մեր և թուրքերի քաղաքակրթական անհամատեղելիության մասին:

Հայության շրջանում թուրքի հանդեպ տարածված ասացվածքներն ասես թուրքի հարևանությամբ ապահով ապրելուն, նրա բռնության զոհի չվերածվելուն ուղղված հայության հարմարվողական ռազմավարություն լինեն:

Հարյուրամյակներով թուրքերի հետ հարաբերվելու կենսափորձը, թուրքի մասին պատկերացումները հայ էթնիկական հանրույթի հոգեկերտվածքում բյուրեղացել են նրանց մասին մի շարք առողջ դիրքորոշումներում, որոնք կենցաղում դրսևորվում են ասացվածքների տեսքով: Վերջիններս հայության հոգեկերտվածքում ականա ակտիվանում են մեր հանդեպ ադրբեջանական ագրեսիայի հերթական դրսևորումից հետո: Հատկանշական հանգամանք. մեզանում թուրքերի հանդեպ առկա ասացվածքներում չկան ագրեսիվ-անհանդուրժողական, նվաճողական բովանդակություն: Ճիշտ հակառակը՝ այստեղ առկա է առողջ պաշտպանական դիրքորոշում:

Հայության Երջանում թուրքի հանդեպ տարածված ասացվածքներն ասես թուրքի հարևանությանը աղափով աղբեղուն, նրա բռնության զոհի չվերածվելուն ուղղված հայության հարմարվողական ռազմավարություն լինեն: Վերջիններիս յուրահատուկ խտացումը պետք է համարել **«թուրքը մնում է թուրք»** ասացվածքը: Հատկապես ընդգծենք, որ վերջինս ոչ թե կարծրատիպ է, այլ ասացվածքի տեսք ունեցող կենսափորձ, այսինքն՝ օբյեկտիվ իրականության արտացոլում հայոց հոգեկերտվածքում: Երբ մենք ասում ենք **«թուրքը մնում է թուրք»**, ընդամենը հասկանում ենք, որ թուրքն ամեն վայրկյան կարող է շինծու, կեղծ բարյացակամությունից անցնել բռնությունների:

...«թուրքը մնում է թուրք», ընդամենը հասկանում ենք, որ թուրքն ամեն վայրկյան կարող է շինծու, կեղծ բարյացակամությունից անցնել բռնությունների:

Մինչդեռ **հայերի մասին թուրքերի, այդ թվում և անդրկովկասցի թուրքերի մոտ առկա ասացվածքները հագեցած են ագրեսիայով: Ըստ էության, դրանք ականհայտ անհանդուրժողականություն սերմանող կարծրատիպեր են:**

Օրինակ՝ անդրկովկասցի թուրքերի մոտ տարածված է հետևյալ ասացվածքը, որը թարգմանվում է՝ «Հասան-Հասան բոյասան, էրմենին քյոքը քյասասան»՝ «Հասան-Հասան մեծացիր, հայի արմատը կտրիր»⁶: Նույնական է

...հայերի մասին թուրքերի, այդ թվում և անդրկովկասցի թուրքերի մոտ առկա ասացվածքները հագեցած են ագրեսիայով: Ըստ էության, դրանք ականհայտ անհանդուրժողականություն սերմանող կարծրատիպեր են:

⁶ **Ղարախանյան Լ.**, Էթնիկական ստերեոտիպերի պաշտպանական ֆունկցիան, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2009:

արդյո՞ք իր բովանդակությամբ այս ասացվածքը մեզանում տարածված «թուրքը մնում է թուրք»-ի հետ: Իհարկե ո՛չ, քանզի այստեղ առկա են տոտալ անհանդուրժողականություն և իռացիոնալ ագրեսիա ծնող նախապաշարմունք:

...հայատյացություն, որ թերևս ունի զուտ հոգեբանական ծագում՝ կապված, ամենայն հավանականությամբ, էթնիկական թերաբժեքության բարդույթի հետ:

Ժողովրդական այսպիսի բանահյուսության առկայությունը հիմնավորում է այն ճշմարտությունը, որ հայերի և անդրկովկասյի թուրքերի համակեցությունը միևնույն պետության շրջանակներում անհնարին է: Ընդ որում՝

այս ասացվածքն իր բնույթով եզակի չէ: Անդրկովկասյի թուրքերի ժողովրդական բանահյուսությունը ներծծված է հայատյացությամբ, որը դժվար է բացատրել զուտ էթնոքաղաքական շահերի բախմամբ, **հայաճյացություն, որ թերևս ունի զուտ հոգեբանական ծագում՝ կապված, ամենայն հավանականությամբ, էթնիկական թերաբժեքության բարդույթի հետ:**

Նման ժողովրդական բանահյուսությունն է պարբերական դարձրել հայոց հանդեպ բռնությունը ժամանակակից Ադրբեջանի գոյության տարբեր ժամանակահատվածներում, բռնություն, որը հենց նման ասացվածքների շնորհիվ ի սկզբանե ստացել է զանգվածային բնույթ: Այլ կերպ ասած՝ նման ասացվածքներն են հոգեբանորեն նախապատրաստում հայերի կոտորածը, դյուրացնում և հավանական դարձնում այն ցանկացած պահի՝ ձերբազատելով անդրկովկասյի թուրքին կատարածի համար բարոյական ապրումներից:

Հատկանշականն այն է, որ այս ասացվածքը հստակորեն ուղղորդված է անդրկովկասցի թուրքերի մատաղ սերնդին: Նրանով անդրկովկասցի թուրքերի սերունդներ են ձևավորվել, և նորերն են ձևավորվում: Այս ասացվածքների միջոցով ատելությունը հայերի հանդեպ փոխանցվում է սերնդեսերունդ: Հենց այս ասացվածքների պատճառով էլ թուրքը մնում է թուրք:

Այստեղ տեղին է անդրադառնալ ամերիկյան սոցիալական հոգեբանների և մարդաբանների հետազոտություններին, համաձայն որոնց՝ մարդկանց մեծամասնությունը նախապաշարմունքները պատրաստի ձևով յուրացնում է մանուկ հասակում՝ այդպիսով չունենալով ստացված տեղեկությանը քննադատաբար մոտենալու հնարավորություն: Հետագայում, մանավանդ 9-11 տարեկան հասակում, մեծահասակների ազդեցության տակ այդ նախապաշարմունքներն էլ ավելի են կարծրանում, ինչի արդյունքում դրանց փոփոխությունը դառնում է գրեթե անհնարին: Ինչպես հայտնի է կարծրատիպերն ու նախապաշարմունքները տվյալ հանրության ինքնագիտակցության մի մասն են: Այդ է պատճառը, որ հակահայկական կարծրատիպացված ագրեսիվ ասացվածքները կայուն են, այնքան կայուն, որ չվերացան անգամ խորհրդային իշխանության կողմից պարտադրված եղբայրության 68 տարիների ընթացքում: Վերջին տարիների հայատյացության քարոզչության արդյունքում դրանք էլ ավելի ամրապնդված կլինեն, անդրկովկասցի թուրքերի հանրության մոտ: Ի դեպ, վերը հիշատակված «Ռեզիդն» կենտրոնի

հետազոտության համաձայն՝ Ադրբեջանում հայության հանդեպ ատելությանը առաջին հերթին աչքի է ընկնում Երիտասարդությունը: Եվ արժե՞ արդյոք զարմանալ, որ Ադրբեջանում Ռամիլ Սաֆարովներ են ծնվում, որ հենց Ռամիլ Սաֆարովներն են ընկալվում որպես հերոս: Այնտեղ Սաֆարովները պահանջված են:

Ռամիլ Սաֆարովի հերոսացման փաստը՝ քաղաքակրթական անհամատեղելիության ապացույց

Պաշտոնական Բաքվի հետևողական ջանքերը՝ ուղղված Ռամիլ Սաֆարովի արտահանձնմանը, ապա նաև նրա արդարացումն ու խրախուսումը հերթական անգամ ի ցույց դրեցին մեր հանդեպ Ադրբեջանի⁷ թշնամական կեցվածքը: Ակնհայտ է, որ տեղի ունեցածը հետևանքն է Ադրբեջանում ձևավորված այլասերված արժեքային համակարգի, ինչի արդյունքում հայատյացությունն այդ երկրում ստացել է ախտաբանական տեսք: Միաժամանակ այս աննախադեպ, սակայն անդրկովկասցի թուրքի տեսակին միանգամայն բնորոշ փաստը պետք է համարել հայատյացության պետական քաղաքականութ-

⁷ Ադրբեջանը չի կարելի դիտարկել իբրև էթնիկական առումով միատարր պետական միավոր: Ադրբեջանի տարածքում բնակվում են մի շարք բնիկ ազգեր, որոնց ներկայացուցիչներից շատերը հայությանը չեն ընկալում իբրև իրենց թշնամի: Տոտալ և իռացիոնալ հայատյացությունը բնորոշ է հիմնականում անդրկովկասցի թուրքերին և Ադրբեջանի բնիկ ազգերի արդեն թուրքացած հատվածին:

յան բարձրակետն ու դրա նոր փուլի մեկնարկը:

Տվյալ դեպքում կարևոր է ընդգծել, որ Ռամիլ Սաֆարովի օրինակը ոչ թե բացառություն է, այլ՝ օրինաչափություն: Ռամիլ Սաֆարովն անդրկովկասցի թուրքերից մեկն է միայն, իսկ նրա կատարած վայրագությունը և վերջինիս հերոսացումը՝ հերթականն Ադրբեջանում: Հիշեցնենք՝ նորօրյա Ադրբեջանում ազգային հերոսի կոչման են արժանացել մարդկության դեմ հանցանք գործած, խաղաղ, անպաշտպան հայ բնակչության հանդեպ արտառոց դաժանությամբ աչքի ընկածները: Հարկ է հստակ գիտակցել, որ Սաֆարովը մեկն է միլիոնավորներից, նրա արարքը հերոսություն համարողները նույնպես պոտենցիալ Սաֆարովներ են: Ադրբեջանում հայ սպանելը վերածվել է պետական գաղափարախոսության: Հանրահայտ է, որ անդրկովկասցի թուրքերի շրջանում հայ սպանելը երբևէ չի ել համարվել հանցագործություն: Այժմ, սակայն, այդ «չգրված օրենքին» տրվել է լեգիտիմ տեսք: Հատկապես ընդգծենք, որ խնդիրը միայն այն չէ, որ Ադրբեջանի ներկայիս ղեկավարությունը հայ սպանելը վերածել է պետական գաղափարախոսության: Առավել մտահոգիչն այն է, որ այդ գաղափարախոսությունն ընկալելի և ընդունելի է անդրկովկասցի թուրքերի հանրության կողմից: Ի դեպ, Ալիևյան կլանը նախընտրական շրջանում, այն էլ հարաճուն ներքին ճգնաժամի պայմաններում պարզապես չէր հերոսացնի Սաֆարովի կերպարը, եթե այդ քայլն անընդունելի լիներ անդրկովկասցի թուրքերի հանրության համար: Ալիևը վստահ էր, որ քաղաքական առումով իր այդ քայլն իրեն դիվի-

դեմոսներ կբերի, վստահ է նաև, որ թերևս բացի մեծ պատերազմ սանձազերծելուց, աշխարհի «մեծամեծերն» իր ցանկացած հակահայկական քայլ ներելու են: Նման իրավիճակում ադրբեջանական ագրեսիայի պոռթկումները պետք է համարել օրինաչափ:

Սակայն հայատյացությունը միայն ալիևյան իշխանության մենաշնորհը չէ, և հնարավոր իշխանափոխությունն Ադրբեջանում այդ առումով ոչինչ չի փոխի: Ադրբեջանում պարզապես չկա

...մենք դատապարտված են հարաճուն տեմպերով բազմապատկել մեր պաշտպանական ներուժը, քանզի դա Արցախի ներկա պետական սահմանի կոնֆիգուրացիայի հետ միասին այն կայուն երաշխիքն է, որն անհնարին է դարձնում ադրբեջանական ագրեսիան՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ իշխանություն կլինի Ադրբեջանում:

մի այնպիսի քաղաքական ուժ, այնպիսի հանրային գործիչ, ում դիրքորոշումները սկզբունքորեն տարբերվեն ալիևյան կլանի դիրքորոշումից: Ագրեսիվ ծավալապաշտությունն ու հայատյացությունը բնորոշ են Ադրբեջանի քաղաքական դաշտի ամխտիր բոլոր դերակատարներին: Այստեղ տարօրինակ ոչինչ չկա, քանզի ինչպես արդեն վերը նշել ենք, այդ դիրքորոշումները բնո-

րոշ են անդրկովկասցի թուրքերի ողջ հանրույթին: Ընդ որում՝ այդ դիրքորոշումների խորքային փոխակերպման որևէ նախադրյալ այսօր չկա: Աքրամ Ալլիևիներն այսպիսի հասարակությունում եզակի բացառություններ են: Հետևաբար՝ չկա նաև որևէ հիմք կարծելու, թե Ադրբեջանի «Ժողովրդավարացման» արդյունքում արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացները կարագանան: Ուստի՝ ի՞նչ իշխանություն էլ որ լինի Բաքվում, ո՛վ էլ որ փոխարինի Ալիևին, չի վարանի հագուրդ տալ իր հայատյացությանը,

եթե զգա, որ ունի այդ հնարավորությունը:

Հակամարտությունը մեր և անդրկովկաս-
ցի թուրքերի միջև չի կարգավորվում հենց այն
պատճառով, որ հայատյացություն-
նը նրանց արժեքային համակար-
գի մի մասն է և փոխանցվում է
անդրկովկասցի թուրքերի հերթա-
կան սերնդին էթնիկական սոցիա-
լականացման մեխանիզմների

...«Արցախը չի կարող այլևս
երբևէ լինել Ադրբեջանի մաս,
քանզի միևնույն պետության
կազմում հայի ու թուրքի հա-
մակեցությունն անհնարին է»...

միջոցով: Ադրբեջան անդրկովկասցի թուրքերի
պետությունն է, որի թշնամական կեցվածքը մեր
հանդեպ իրականություն է՝ երկարաձգված ժա-
մանակի մեջ: Այստեղից էլ հետևություն. **մենք
դաժադարսված են հարաժուռ սեմոթերով
բազմադասկել մեր դաժադարական ներուժը,
բանգի դա Արցախի ներկա դեռական սահմա-
նի կոնֆիգուրացիայի հեռ միասին այն կա-
յուն երաշխիքն է, որն անհնարին է դարձնում
ադրբեջանական ագրեսիան՝ անկախ այն
հանգամանքից, թե ինչ իշխանություն կլինի
Ադրբեջանում:**

Ողջ վերը նշվածն Ադրբեջանին տարածքային
զիջումները բացառելու հիմնավոր փաստարկ-
ներից է: Մանրամասներ:

Սաֆարովի հերոսացման վերաբերյալ
մեր երկրի նախագահը հայտարարել է, որ
փառաբանելով Ռամիլ Սաֆարովին՝ Ադրբեջանն
իր իսկ ձեռքով իրեն վերածել է հանցագործութ-
յան հովանավորի: Հետևաբար՝
հարկավոր է նախ զարգացնել
արտաքին քաղաքական շրջանա-
ռության մեջ արդեն իսկ ներդրված

...«արցախահայությունը չի
կարող լինել անվտանգ առանց
Արցախի ներկա՝ փաստացի
սահմանների»:

Սաֆարովի կերպարի հերոսացումը խորհրդանշական իրադարձություն է: Այն ներկայիս Ադրբեջանում պետական մակարդակով կազմակերպված հայատյացության քարոզչության տիպական օրինակ է և բնորոշում է մերօրյա Ադրբեջանում տիրապետող ագրեսիվ արժեքային համակարգը, ի ցույց դնում հայության և թուրքերի միջև առկա քաղաքակրթական բախումը:

Սաֆարովի կերպարի հերոսացումը խորհրդանշական իրադարձություն է: Այն ներկայիս Ադրբեջանում ղեկավարող մակարդակով կազմակերպված հայատյացության քարոզչության տիպական օրինակ է և բնորոշում է մերօրյա Ադրբեջանում տիրապետող ագրեսիվ արժեքային համակարգը, ի ցույց դնում հայության և թուրքերի միջև առկա քաղաքակրթական բախումը:

Ադրբեջանում պետականորեն կազմակերպված հայատյացության մթնոլորտում սերունդներ են մեծացել, հետևաբար՝ ադրբեջանական հանրության թշնամանքը Հայաստանի ու հայության հանդեպ ձեռք է բերել կայուն բնույթ, ինչն անհնարին է դարձնում հուսալի խաղաղության հեռանկարը տարածքային զիջումներից հետո: Այդ կայուն թշնամանքի ֆոնին տարածքային զիջումներն ուղղակի անտրամաբանական և անընդունելի են:

Թեզը, թե *«Արցախը չի կարող այլևս երբևէ լինել Ադրբեջանի մաս, քանզի միևնույն ժամանակ կազմում հայի ու թուրքի համակեցությունն անհնարին է»*, ապա նաև շրջանառության մեջ դնել նոր թեզ, այն է՝ *«Արցախահայությունը չի կարող լինել անվսանդ առանց Արցախի ներկա՝ փաստացի սահմանների»*:

Սաֆարովի կերպարի հերոսացումը խորհրդանշական իրադարձություն է: Այն ներկայիս Ադրբեջանում ղեկավարող մակարդակով կազմակերպված հայատյացության քարոզչության տիպական օրինակ է և բնորոշում է մերօրյա Ադրբեջանում տիրապետող ագրեսիվ արժեքային համակարգը, ի ցույց դնում հայության և թուրքերի միջև առկա քաղաքակրթական բախումը: Ըստ այդմ՝ *Ադրբեջանում ղեկավարողներն կազմակերպված հայատյացության մթնոլորտում սերունդներ են մեծացել, հետևաբար՝ ադրբեջանական հանրության թշնամանքը Հայաստանի ու հայության հանդեպ ձեռք է բերել կայուն բնույթ, ինչն անհնարին է դարձնում հուսալի խաղաղության հեռանկարը տարածքային զիջումներից հետո: Այդ կայուն*

***թեմանման ֆոնին սարածֆա-
յին զիջումներն ուղղակի անս-
րամաբանական և անընդունելի
են:***

Ինչո՞ւ պետք է Արցախը զիջի
իր տարածքները մի պետության,
որի հասարակությունը թշնամա-
բար է տրամադրված իր հանդեպ:
Ի՞նչ տրամաբանությամբ պետք
է Արցախը զիջի իր անվտան-
գության առաջնային երաշխիքն
իրեն ոչնչացնելու պատրաստ
Ադրբեջանին, որտեղ հայատյա-
ցությունը վերածվել է պետա-
կան գաղափարախոսության, որտեղ
հայ սպա-
նելը մատուցվում է իբրև խրախուսելի արարք,
որտեղ այդ ամենին զուգահեռ՝ Հայաստանի
Հանրապետությունը ներկայացվում է իբրև
Արևմտյան Ադրբեջան: Եվ ամենակարևորը՝ ի՞նչ
փաստարկներով պետք է աշխարհը փորձի հա-
մոզել պաշտոնական Ստեփանակերտին դեմ
զնալ սեփական ժողովրդին:

***Մեր և անդրկովկասցի թուրքերի միջև ֆաղա-
փակրթական անհամատեղելիությունը փաստ
է: Եվ ուրեմն՝ ստեղծված լայնամասշտաբ հու-
սալի խաղաղադության գրավականը մեկն
է. անդրկովկասցի թուրքերի ընկալումներում
դեմ է հստակ լինի՝ իրենց հայաստացությանը
հագուրդ սալու յուրաքանչյուր փորձ կունենա
աղետալի հետևանքներ, ինչի առաջնային գրա-
վականն Արցախի ներկա տարածքն է:***

Մեր և անդրկովկասցի թուր-
քերի միջև քաղաքակրթա-
կան անհամատեղելիությունը
փաստ է: Եվ ուրեմն՝ ստեղծ-
ված պայմաններում հուսալի
խաղաղադության գրավականը
մեկն է. անդրկովկասցի թուր-
քերի ընկալումներում պետք
է հստակ լինի՝ իրենց հայատ-
յացությանը հագուրդ տալու
յուրաքանչյուր փորձ կունենա
աղետալի հետևանքներ, ին-
չի առաջնային գրավականն
Արցախի ներկա տարածքն է:

2. Տարածքային գիշումների բացառումը հիմնավորող իրավաքաղաքական փաստարկները

2.1 Վճռորոշ խոսքն Արցախինն է

Առավել քան ակնհայտ է, որ հայաստանյան հանրության շրջանում առկա է մադրիդյան սկզբունքների վտանգավոր լինելու գիտակցումը: Ավելին՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունն այդ մասին հայտարարում է բացահայտ և, ինչը տվյալ դեպքում հատկապես կարևոր է շեշտել, արտահայտում է արցախահայության հավաքական կամքը:

Անշուշտ, փաստ է, որ *այս տարիներին մադրիդյան սկզբունքների հենքի վրա համաձայնության ձեռքբերումը ձախողվել է դաշտնական Բաքվի ագրեսիվ-ծավալադաշտական դիրքորոշման դաժնառոտվ*: Իսկ ինչպե՞ս վարվել, եթե նախագահ Ի. Ալիևը հանդես բերի առավել շրջահայաց, ճկուն մոտեցում և համաձայնի ընդունել մադրիդյան սկզբունքները: Չէ՞ որ այդ

դեպքում ադրբեջանական կողմն ակնհայտորեն շահում է:

Ահա հենց այստեղ է, որ վճռորոշ է դառնում Արցախի՝ որպես ինքնորոշված սուբյեկտի ինքնուրույն դիրքորոշումն հանդես բերելը, ըստ այդմ՝ նաև պաշ-

...այս տարիներին մադրիդյան սկզբունքների հենքի վրա համաձայնության ձեռքբերումը ձախողվել է պաշտոնական Բաքվի ագրեսիվ-ծավալապաշտական դիրքորոշման պատճառով:

տոնական Ստեփանակերտի՝ որպես բանակցային առանձին կողմ հանդես գալը: Եվ բնավ պատահական չէ, որ մադրիդյան սկզբունքներից հրաժարվելու, տարածքներ չզիջելու, այսպես կոչված «ադրբեջանցի փախստականների» վերադարձը բացառելու մասին կտրուկ դիրքորոշումներով է հանդես գալիս Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը՝ որպես Արցա-

... «ոչ մի թիզ հող» դիրքորոշումը՝ որպես Արցախի ինքնորոշված ժողովրդի հավաքական կամքի դրսևորում, միջազգային հարթակներում պետք է բացահայտորեն արտահայտի պաշտոնական Ստեփանակերտը, իսկ ՀՀ-ն, ընդգծելով Արցախի անվտանգության երաշխավորի իր դերը, պաշտպանի պաշտոնական Ստեփանակերտի այդ դիրքորոշումը:

խի քաղաքացիների՝ արցախահայության հավաքական կամքն արտահայտող միակ լեգիտիմ իշխանություն: Այստեղ հարկ է հատուկ ընդգծել՝ պաշտոնական Ստեփանակերտի դիրքորոշումն այլ լինել պարզապես չի կարող: Այսպիսով՝ **«ոչ մի թիզ հող» դիրքորոշումը՝ որպես Արցախի ինքնորոշված ժողովրդի հավաքական կամքի դրսևորում, միջազգային հարթակներում ղեկավարությունը պետք է բացահայտորեն արտահայտի ղեկավարական Ստեփանակերտը, իսկ ՀՀ-ն, ընդգծելով Արցախի անվտանգության երաշխավորի իր դերը, պաշտպանի ղեկավարական Ստեփանակերտի այդ դիրքորոշումը:**

Տվյալ դեպքում հատկանշականն այն է, որ այս կերպ ընդգծվում է Արցախի՝ որպես հակամարտության ինքնուրույն սուբյեկտի դերը, որի խոսքը պետք է վճռորոշ լինի խնդրի կարգավորման հարցում: Հենց այս առումով էլ Արցախի անկախ լինելու մարտավարության քաղաքական ռեսուրսը սպառված համարել չի կարելի:

...տարածքների զիջումը վտանգում է ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության անվտանգությունը:

Այստեղ տեղին է անդրադառնալ 2014 թ.-ի մայիսի 9-ին Հաղթանակի զբոսայգում ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից արված այն հայտարարությանը, թե մեր ծրագրերում տարածքներ զիջել չկան:

Բանն այն է, որ կա մի բացառություն, երբ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարությունը նույնպես կարող է բացահայտորեն և դիվանագիտորեն գրագետ դեմ արտահայտվել տարածքներ հանձնելուն. ***սարածքների զիջումը վսանգում է ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության անվտանգությունը:*** Դիվանագիտորեն ճիշտ է, որ նման տեսակետն արտահայտում է ՀՀ պաշտպանության նախարարը: Քանի որ ***Ադրբեջանը բացահայտորեն հավակնում է Հայաստանի Հանրապետության սարածքին, հեռաբար՝ Արցախի ներկայիս սարածքը ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության առաջնային երաշխիքն է:***

Եվ հետո. ի՞նչ է լինելու Ադրբեջանի կուլտա-

...Ադրբեջանը բացահայտորեն հավակնում է Հայաստանի Հանրապետության տարածքին, հեռաբար՝ Արցախի ներկայիս տարածքը ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության առաջնային երաշխիքն է:

կած ահռելի սպառնալուծության հետ: Այստեղ հարկ է հատկապես ընդգծել. եթե անգամ ենթադրենք, որ Ադրբեջանը տա իր համաձայնությունը որոշ տարածքների ստանալուց հետո ճանաչել Արցախի անկախությունը, ինչը գրեթե անհավանական

է, բայց անգամ այդ դեպքում Արցախի անվտանգությունը երաշխավորված համարել չի կարելի: Կրկնենք. **Ադրբեջանի կողմից Արցախի անկախության ծանաչումն ինքնին Արցախի անվտանգության երաշխիք չէ:** Չկա ոչ մի հիմնավոր փաստարկ առ այն, որ Ադրբեջանը, մադրիդյան սկզբունքների համաձայն Արցախի հարավը ստանալուց, ըստ այդմ՝ հայկական կողմի հանդեպ ռազմական գերազանցություն ձեռք բերելուց հետո, մի ինչ-որ պատրվակով չի բեկանի բանակցային գործընթացը կամ նոր հակամարտություն չի հրահրի ու մեզ համար ծայրահեղ անցանկալի պայմաններում չի ծավալի ռազմական գործողություններ՝ նախկին ԼՂԻՄ-ի սահմաններում հայտնված Արցախը նվաճելու և ՀՀ հարավային մարզերը զավթելով Նախիջևանի հետ կապ հաստատելու համար: Առնվազն միամտություն է կարծել, որ Ադրբեջանին կարող են զսպել խոցելի դարձած Արցախի անվտանգության ինչ-ինչ միջազգային երաշխիքները: Այս տարիներին մենք բազմիցս համոզվել ենք միջազգային կառույցների, այդ կառույցների միջնորդությամբ ստանձնած պարտավորությունների հանդեպ պաշտոնական Բաքվի արհամարհական վերաբերմունքում: Սեփական պարտավորություններից հրաժարվելու, պայմանավորվածությունները դրժելու դեպքում պատժվելու անխուսափելիությունն է միայն, որ կարող է զսպել Բաքվին: Իսկ ո՞վ կարող է երաշխավորել, որ մեր տարածաշրջանում անընդհատ կլինի այն ուժը, որը պատրաստ

Ադրբեջանի կողմից Արցախի անկախության ծանաչումն ինքնին Արցախի անվտանգության երաշխիք չէ:

կլինի հանուն Արցախի անվտանգության պատժել Բաքվին իր հնարավոր ուխտադրժության համար: 2016-ի ապրիլին, երբ ադրբեջանական կողմը բացահայտորեն նախահարձակ եղավ ու լայնամասշտաբ հարձակման անցավ Արցախի դեմ մի քանի ուղղություններով, չգտնվեց որևէ միջազգային կառույց, որևէ երկիր, որ անգամ փաստեր Ադրբեջանի նախահարձակ լինելը, ուր մնաց, թե դատապարտեր Բաքվին նախահարձակ լինելու համար: Որտե՞ղ է այն երաշխիքը, որ նման սցենարը չի կրկնվի ապագայում, երբ մադրիդյան սկզբունքների համաձայն Արցախի հարավը ստանալուց հետո Ադրբեջանը փորձի հարձակվել թեկուզ ճանաչված, բայց խոցելի դարձած Արցախի վրա: Մենք բնավ հակված չենք արժեզրկելու Ադրբեջանի կողմից Արցախի անկախության ճանաչման կարևորությունը: Սակայն վերջինս իրական ռազմաքաղաքական արժեք կունենա միայն Արցախի անվտանգության երաշխիքներից թերևս առաջնայինի՝ նրա ներկայիս սահմանադրորեն ամրագրված տարածքի պահպանման դեպքում: Ադրբեջանը կհարգի Արցախի ինքնիշխանությունն ու չի դիմի ագրեսիայի միայն այդ ագրեսիայի երաշխավորված ձախողման հեռանկարի դեպքում: Ադրբեջանին զսպող իրական ուժը, որն աշխարհաքաղաքական վայրիվերումներից անկախ եղել է, կա ու կլինի, Հայոց բանակն է, որը, սակայն, չի կարող լիարժեքորեն ապահովել Արցախի անվտանգությունը նախկին ԼՂԻՄ-ի սահմաններում:

Հետևաբար՝ Արցախի տարածքը, նրա

այսօրվա սահմանների կոնֆիգուրացիան մեծ պատերազմը զսպող առաջնային երաշխիքն է: Վերջինս Ադրբեջանի կուտակած սպառազինությունների գործոնի հիմնական հակակշիռն է, որով պահպանվում է ուժերի հավասարակշռությունը:

Արցախի ներկա տարածքի սահմանադրորեն ամրագրված լինելու փաստարկը

Տարածքային գիշումների բացառումը հիմնավորող հիմնական փաստարկը, որով հանդես է գալիս պաշտոնական Ստեփանակերտը, և որը՝ որպես Արցախի պաշտոնական դիրքորոշում, ըստ իս, պետք է սատարի պաշտոնական Երևանը, ***Արցախի տարածքային ամբողջականության սահմանադրորեն ամրագրված լինելն է:*** Սույն փաստարկը, իր հերթին, հանգամանորեն հիմնավորելու կարիք ունի: Ուստի՝ կառուցենք հետևյալ տրամաբանական շղթան:

Ինչպես գիտենք, հակամարտության հայանպաստ կարգավորման հեռանկարը խարսխվում է ազգերի ինքնորոշման իրավունքի վրա: Ներկայումս Արցախի հայապատկանությունը միջազգային իրավունքի դիրքերից ամրագրելու ամենաօպտիմալ մարտավարությունն «անկախ Արցախ» խաղալն է: Ընդ որում՝ հայկական դիվանագիտությունն աշխարհին մատուցում է արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման երկու բաղադրիչ. առաջին՝ ***Ադրբեջանից Արցախի անկախ լինելը***, երկրորդ՝ ***սեփական ղեկավարումն ստեղծելու արցախի բնակչու-***

...«մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տարածքի ամբողջականության վերականգնումը և սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունն իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործության ներքո»:

յան հավաքական կամֆր: Ըստ այդմ՝ հայոց երկրորդ պետությունն աշխարհին ներկայանում է համապատասխան ատրիբուտներով, նախևառաջ՝ հիմնարար օրենքով՝ սահմանադրությամբ: Այդ սահմանադրությունն ընդունվել է 2006 թ.-ի դեկտեմբերի 10-ին համաժողովրդական հանրաքվեով, ըստ այդմ՝ **վերջինս**

Արցախի բնակչության հավաքական կամարահայտությունն է, այսինքն՝ նրա ինֆորուման իրավունքի իրացման բարձրակետը: Համաձայն Արցախի գործող սահմանադրության 142-րդ հոդվածի՝ «**մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տեսական սահմաններին հասնելու հանրային իշխանությունն իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործության ներքո**»:

Սույն ձևակերպումն առաջին հայացքից կարող է տպավորություն թողնել, թե իր փաստացի տարածքի հանդեպ Արցախ պետության հանրային իշխանության իրականացումն ունի ժամանակավոր բնույթ, քանզի այդ հոդվածով Արցախի ներկա տարածքը բացարձակ չի հռչակվում որպես անձեռնմխելի: Իրականում, սակայն, Արցախի սահմանադրության 142-րդ հոդվածը կոչված է սկզբունքորեն բացառելու տարածքային զիջումները: Հիմնավորենք ասվածը:

Արցախի սահմանադրության վերը նշված

հողվածն իր փաստացի տարածքի հանդեպ Արցախի հանրային իշխանության իրականացումն ուղղակիորեն կապում է երկու նախապայմանի հետ՝ Արցախի

պետական տարածքի ամբողջականության վերականգնում և սահմանների ճշգրտում: Տվյալ դեպքում՝ **սկզբունքային կարևոր է այն, որ «սահմանների ճշգրտում» ասվածը բնավ չի նշանակում տարածքների հանձնում:** Բանն այն է, որ 142-րդ հոդվածում Արցախի սահմանների ճշգրտումն ուղղակիորեն պայմանավորված է պետական տարածքի ամբողջականության վերականգնմամբ: **Չեռևաբար՝ այս դեպքում խոսքը ոչ թե, այսպես կոչված, «յոթ շրջանները» Ադրբեջանին տալու և նախկին ԼՂԻՄ-ի սահմաններին վերադառնալու, այլ Շահումյանի շրջանը բանակցություններով՝ տարածքային համարժեք փոխանակման սցենարով, հեռ ստանալու համար անհրաժեշտ իրավական հիմք ունենալու մասին է:** Այսինքն՝ սահմանադրության վերը նշված հոդվածի այս ձևակերպումը սկզբունքորեն սխալ է մեկնաբանել **«հող՝ ծանաչման դիմաց» բանաձևի համառարում:** Ասվածի ապացույցն այն է, որ հողվածում որևէ կերպ չի մասնավորեցվում նախկին ԼՂԻՄ-ի տարածքը՝ որպես «անսակարկելի», չի նշվում նաև, թե Արցախի տարածքային ամբողջականության վերականգնումից հետո

...սկզբունքային կարևոր է այն, որ «սահմանների ճշգրտում» ասվածը բնավ չի նշանակում տարածքների հանձնում:

Չեռևաբար՝ այս դեպքում խոսքը ոչ թե, այսպես կոչված, «յոթ շրջանները» Ադրբեջանին տալու և նախկին ԼՂԻՄ-ի սահմաններին վերադառնալու, այլ Շահումյանի շրջանը բանակցություններով՝ տարածքային համարժեք փոխանակման սցենարով, հետ ստանալու համար անհրաժեշտ իրավական հիմք ունենալու մասին է:

Ադրբեջանի հետ սահմանները ճշգրտելիս ներկայիս փաստացի տարածքի որքան մասը և հատկապես որ հատվածն է սակարկելի լինելու: Այս ամենից բացի հարկ է նշել նաև, որ տեսանելի հեռանկարում անհնարին է անգամ պատկերացնելը, որ պաշտոնական Բաքուն կճանաչի Արցախի անկախ լինելը, առավել ևս կքննարկի սահմանների ճշգրտման, մասնավորապես՝ Շահումյանի շրջանի փոխանակման հարցը:

Հետևաբար՝ սույն հոդվածը ենթադրում է Արցախի ներկա տարածքի ամբողջականության ընդամենը մասնակի փոփոխության զուտ տեսական հնարավորություն, այն էլ՝ պայմանավորված սկզբունքորեն անիրականանալի պայմանների հետ, և սկզբունքորեն բացառում է ներկայիս սահմանների կոնֆիգուրացիայի էական փոփոխություն:

Աշխարհում կան բազմաթիվ պետություններ, որոնք, լինելով միջազգային իրավունքի սուբյեկտ, ունեն սահմանային վեճեր հարևանների հետ, որոնց սահմանները ճշգրտված չեն: Այսինքն՝ սահմանների ճշգրտումն ու փոխադարձ ճանաչումը տևական գործընթաց են անգամ խաղաղ փոխհարաբերություններ ունեցող հարևան երկրների դեպքում:

Բացի այդ, պետք է հաշվի առնել նաև, որ սույն ձևակերպումն արվել է 2006-ին: Մինչդեռ այժմ իրողություններն այլ են. այսօր Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը բացահայտ հայտարարում է տարածքային գիշումները բացառելու մասին: Ի դեպ, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության նման հայտարար-

րություններով հանդես գալը հերթական ապացույցն է այն բանի, որ Արցախի սահմանադրության 142-րդ հոդվածը չի կարելի մեկնաբանել «յոթ շրջանի վերադարձի» համատեքստում:

Արցախի 11432 կմ քառ. տարածքի անսակարկելիությունն ամրագրված է սահմանադրությամբ, որն արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման բարձրակետն է: Այսինքն՝ համաձայն համաժողովրդական կամարտահայտության՝ Արցախ պետությունն իր ինքնիշխանությունը տարածել է նախկին ԼՂԻՄ-ից դուրս գտնվող տարածքների վրա և արդյունավետ վերահսկողություն է իրականացնում դրանց հանդեպ: Հետևաբար՝ **հարկավոր է շրջանառել արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման երրորդ բաղադրիչը՝ սահմանադրության ընդունումը՝ որդես արցախահայության ինքնակազմակերպման և հավաքական կամքի բարձրագույն դրսևորում, որով էլ հիմնավորել իրողությունն առ այն, որ Արցախի Հանրապետությունը նախկին ԼՂԻՄ-ը չէ:** Այսպիսով՝ **Արցախի բնակչությունն իր ինքնորոշման իրավունքն իրացնում է՝ կառուցելով պետականություն ո՛չ թե նախկին ԼՂԻՄ-ի, այլ Արցախի ներկայիս՝ սահմանադրորեն ամրագրված տարածքում:**

... հարկավոր է շրջանառել արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման երրորդ բաղադրիչը՝ սահմանադրության ընդունումը՝ որպես արցախահայության ինքնակազմակերպման և հավաքական կամքի բարձրագույն դրսևորում, որով էլ հիմնավորել իրողությունն առ այն, որ Արցախի Հանրապետությունը նախկին ԼՂԻՄ-ը չէ:

... Արցախի բնակչությունն իր ինքնորոշման իրավունքն իրացնում է՝ կառուցելով պետականություն ո՛չ թե նախկին ԼՂԻՄ-ի, այլ Արցախի ներկայիս՝ սահմանադրորեն ամրագրված տարածքում:

...նախկին **ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս գտնվող հայկական տարածքներն ադրբեջանական բանակի համար ծառայել են իբրև արցախահայության դեմ ագրեսիայի ռազմահենադաշտ և ազատագրվել են Արցախի բնակչությանը պարտադրված պատերազմում՝ վերածվելով անվտանգության երաշխիքի:**

Տարածքային զիջումների բացառումը ինքնորոշման իրավունքի իրացման մարտավարության համաշարուն հիմնավորելը շահեկան է, **բանգի այդ կերպ հնարավոր է դառնում սահուն, առանց կտրուկ փայլերի ի շահ մեզ ձևափոխել բանակցային գործընթացի տրամաբանությունը:**

Տարածքային զիջումների բացառումն հիմնավորող մյուս՝ կարևորագույն փաստարկը, որը լրացնում է նախորդին, հետևյալն է. **նախկին ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս գտնվող հայկական տարածքներն ադրբեջանական բանակի համար ծառայել են իբրև արցախահայության դեմ ագրեսիայի ռազմահենադաշտ և ազատագրվել են Արցախի բնակչությանը տարադրված պատերազմում՝ վերածվելով անվտանգության երաշխիքի:** Տվյալ դեպքում հատկանշականն այն է, որ **արցախահայությունն իրացրել է իր պատշաճությունը իրավունքը՝ ոչնչացնելով իրեն սղառնացող ագրեսիայի օջախները:**

Ողջ վերը նշվածն իր արտահայտությունը պետք է գտնի նաև հակիրճ, բայց դիպուկ եզրույթի տեսքով: Առիթ ունեցել ենք նշելու Ադրբեջանի հետ հակամարտության ծագումնա-

... արցախահայությունն իրացրել է իր պաշտպանվելու իրավունքը՝ ոչնչացնելով իրեն սպառնացող ագրեսիայի օջախները:

բանության, ընթացքի ու կարգավորման հեռանկարի վերաբերյալ ճշգրիտ եզրույթների ստեղծման և շրջանառելու անհրաժեշտության մասին, քանզի եզրույթները

հանրային դիրքորոշումներ են ձևավորում: Տվյալ դեպքում իբրև այդպիսին համդես է գալիս **«Արցախի սահմանադրոեն ամրագրված սահմաններ»** եզրույթը: Մանրամասները:

Մեզանում երբեմն օգտագործվում են «անվտանգության գոտի» եզրույթը, որով ընդգծվում է այդ տարածքների կարևոր լինելը Արցախի անվտանգության համար, և «ազատագրված տարածքներ» եզրույթը՝ նշելու համար այդ տարածքների պատմականորեն մեզ պատկանելու, ինչպես նաև ազդեցորին ճնշելու հանգամանքը: Սակայն հենց **«Արցախի սահմանադրոեն ամրագրված սահմաններ» եզրույթն է աղեկվա՛ս արժահայտում Արցախի փաստացի սահմանի անսակարկելիությունը թե՛ ներկայում, թե՛ ապագայում:** Այս տեսակետից **«Արցախի ղեկավար սահման»** և **«Արցախի սահմանադրոեն ամրագրված սահմաններ»** եզրերի տրամաբանությունը նույնն է. Արցախի ներկայիս տարածքն անսակարկելի է:

Ասվածի համատեքստում կարևոր է նաև անդրադառնալ հետևյալին: Թեև հակամարտությունն Ադրբեջանի հետ կարգավորված չէ, սակայն հայոց երկրորդ պետությունը՝ Արցախը, արդեն կայացած է: Այս փաստն այսօր արդեն անհնար է անտեսել: Ուստի՝ հարկավոր է շարունակել Արցախն աշխարհին ճանաչելի դարձնելու ջանքերն ու միաժամանակ միջազգային հարթակներում զարգացնել այն

...«Արցախի սահմանադրոեն ամրագրված տարածքներ» ...

«Արցախի սահմանադրոեն ամրագրված տարածքներ» եզրույթն է աղեկվա՛տ արտահայտում Արցախի փաստացի տարածքի անսակարկելիությունը թե՛ ներկայում, թե՛ ապագայում:

**թեզը, որ *Արցախի սահմանների ծեզրսված ու միջազգայնորեն ճանաչված չլինելը սկզբուն-
փորեն չի կարող խոչընդոտել հայոց երկրորդ
դեռության կայացմանն ու իրավասուբյեկ-
տության ձեռք բերմանը:***

Մեկ այլ կարևոր հանգամանք: Քանի որ
նախկին «ԼՂԻՄ-ին հարակից տարածքները
հանձնելու» գաղափարը որոշ արտաքին ուժեր
ուղղակիորեն կապում են տարածաշրջան խա-

ղաղապահ ուժերի տեղակայ-
ման «անհրաժեշտության» հետ,
ապա տեղին կլինի հակիրճ անդ-
րադառնալ նաև այդ խնդրին:

Առավել քան ակնհայտ է, որ
որևէ միջազգային խաղաղա-
պահ առաքելություն ի գործու չէ
անգամ մասնակիորեն փոխարի-

**...Արցախի սահմանների
ճշգրտված ու միջազգայնորեն
ճանաչված չլինելը սկզբուն-
քորեն չի կարող խոչընդոտել
հայոց երկրորդ պետության
կայացմանն ու իրավասուբյեկ-
տության ձեռք բերմանը:**

նել անվտանգության այն իրական երաշխիքին,
որն ընձեռում է մեզ Արցախի սահմանադրորեն
ամրագրված տարածքը: Այդ առաքելությունների
փորձը ցույց է տալիս, որ դրանք, որպես կանոն,
չեն ապահովում հուսալի և տևական խաղա-
ղություն հակամարտող կողմերի միջև: Ավելին՝
երբեմն խաղաղություն ապահովելու կոչված մի-
ջազգային ուժերն իրենք են վերածվում բռնու-
թյան թիրախի և պաշտպանության կարիք ու-
նենում: Բացի այդ, նման առաքելությունները,
գրեթե միշտ լինելով աշխարհաքաղաքականո-
րեն պայմանավորված, վերածվում են հակա-
մարտող կողմերի վրա աշխարհաքաղաքական
ճնշման գործիքի:

Այս տարիներին ՀՀ պաշտպանության նա-

խարար Սեյրան Օհանյանը հաճախ է հնչեցրել այն գաղափարը, որ ամենաարդյունավետ խաղաղապահ ուժն Արցախի Պաշտպանության բանակն է: Այս թեզը դիպուկ և դիվանագիտորեն ճշգրիտ է արտահայտում հայկական կողմի անհամաձայնությունը տարածաշրջանում միջազգային խաղաղապահ ուժերի տեղակայման գաղափարի հանդեպ: Կարծում եմ՝ նպատակահարմար է, որպեսզի հայկական կողմերը միջազգային հարթակներում զարգացնեն հետևյալ դիրքորոշումը: **Ադրբեջանը միտումնավոր ձախողում է վստահության**

մթնոլորտի ձևավորմանն ուղղված ղայմանավորվածությունները, որոնք ձեռք են բերվում միջազգային միջնորդությամբ, սպառնալիքներ են սանձազերծում և ուժի կիրառման սպառնալիքներ հնչեցնում: Նման ղայմաններում հայ-ադրբեջանական հակամարտության գոտում հուսալի խաղաղություն ապահովելու ունակ միակ ուժն Արցախի Պաշտպանության բանակն է, որը հաջողությամբ կատարում է այդ առաքելությունն արդեն ավելի քան քսան տարի:

Ադրբեջանը միտումնավոր ձախողում է վստահության մթնոլորտի ձևավորմանն ուղղված ղայմանավորվածությունները, որոնք ձեռք են բերվում միջազգային միջնորդությամբ, սպառնալիքներ են սանձազերծում և ուժի կիրառման սպառնալիքներ հնչեցնում: Նման ղայմաններում հայ-ադրբեջանական հակամարտության գոտում հուսալի խաղաղություն ապահովելու ունակ միակ ուժն Արցախի Պաշտպանության բանակն է, որը հաջողությամբ կատարում է այդ առաքելությունն արդեն ավելի քան քսան տարի:

Սույն համաշարուն անհրաժեշտ է անդրադառնալ մի կարևոր խնդրի ևս: Հարկավոր է կայուն պարբերականությամբ լուսաբանել Արցախի Քաշաթաղի, Շահումյանի և Հադրուքի շրջաններ-

րում ընթացող վերաբնակեցման աշխատանքները: Այդ տարածքները հայկական տեղեկատվական դաշտում իրենց կայուն տեղը պետք է ունենան, կազմեն հայկական «տեղեկատվական «մենք»-ի» մի մասը: Հայաստանի այլ շրջաններում պետք է տեսնեն, որ այս տարածքներում կյանք կա, որ այստեղ բնակավայրեր են հիմնվում ու շենանում, որ այստեղ բնակչության թիվն աճում է և արդեն կազմում ավելի քան 14.000 մարդ: Հանրային ուշադրությունն այս տարածքների վրա բևեռելը շատ կարևոր է. մեր հանրությունը պետք է ընկալի այդ տարածքները որպես իրենց: Մասնավորապես՝ մեզանում հարկավոր է ձևավորել տեսակետ, որ այստեղ վերաբնակվելը շահավետ է: Շատ կարևոր է նաև, որ մայր հայրենիքին վերադառնալուց այս տարածքներում բնակվող մեր հայրենակիցներն իրենց լքված, մեկուսացված չզգան, իրենց զգան հայկական տարածքի մաս:

Սկզբունքորեն կարևոր է նաև պարբերաբար հնչեցնել տեղաբնակների անգիջում կեցվածքը տարածքներ հանձնելու գաղափարի հանդեպ: Սա դիվանագիտորեն ճիշտ մարտավարություն է: Այստեղ բնակվողը պետք է առաջին հերթին «ոչ» ասի տարածք հանձնելու գաղափարին՝ որպես այդտեղ ապրող, այդ հողի տեր: Տեղաբնակների սկզբունքային հավաքական «ոչ»-ը շատ կարևոր դիվանագիտական ռեսուրս է, որը պետք է օգտագործել՝ միջազգային հարթակներում ընդգծելով, որ այս մարդկանց խոսքը պետք է որոշիչ լինի: Հարկավոր է միջազգային հարթակներում վերոնշյալ շրջաններում ապրողներին

ներկայացնել որպես գործոն, որի հետ անհնար է հաշվի չնստել:

Իսկ ի՞նչ է հուշում միջազգային փորձը

Անդրադառնալով տարածքներ չհանձնելու իրավաքաղաքական փաստարկներին՝ տեղին է կատարել հետևյալ հարցադրումը. ի՞նչ տիպի հակամարտություններն են կարգավորվել տարածքային զիջումների կամ միակողմանի զիջումների միջոցով:

Յիմնվելով միջպետական հարաբերությունների փորձի վրա՝ վստահաբար կարող ենք փաստել հետևյալը. ***սարածքային զիջումների միջոցով կարգավորվել են միմիայն այն հակամարտությունները, որոնք ծագել են միջազգային իրավունքի երկու ճանաչված սուբյեկտների միջև, և որոնց արդյունքում դաժեռազնող կողմերից մեկը գրավել է մյուսի սարածքը կամ դրա մի մասը:*** Ահա այս դեպքում, այո, բանակցային փուլում խաղաղությունը ձեռք է բերվել հակառակորդի ողջ գրավված տարածքը կամ այդ տարածքի մի մասը վերադարձնելու միջոցով: Ընդ որում՝ տվյալ դեպքում տարածքային զիջումների ծավալը կանխորոշում է պատերազմի բուն նպատակը՝ կան հակառակորդի ռազմատնտեսական ներուժի թուլացում, կան նրա տարածքի մի մասի հանդեպ հավակնություն և կան էլ հակառակորդի տարածքի

...տարածքային զիջումների միջոցով կարգավորվել են միմիայն այն հակամարտությունները, որոնք ծագել են միջազգային իրավունքի երկու ճանաչված սուբյեկտների միջև, և որոնց արդյունքում պատերազմող կողմերից մեկը գրավել է մյուսի տարածքը կամ դրա մի մասը:

մի մասն ինչ-ինչ նպատակներով ժամանակավորապես վերահսկելու ցանկություն: Տարածքային հավակնությունների առկայության դեպքում, որպես կանոն, նվաճվում է ավելին, քան այնքանը, որին հավակնում են՝ բանակցություններում զիջումներից հետո ցանկալին պահպանելու համար:

Սակայն **միջազգային հարաբերությունների լուծարմանը հայտնի չէ գեթ մեկ նախադեպ, երբ տարածքային զիջումներով կարգավորվի հանրույթի ինֆորմացիոն իրավունքի իրացման լուծարման ծագած հակամարտությունը:** Տարածքային զիջումներով հակամարտությունը կարգավորելու մեթոդաբանությունն այս դեպքում անպիտան է: Չկա նախադեպ, երբ ինքնորոշված հանրույթն իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչվելու գործընթացում զիջի այն տարածքի մի մասը, որի վրա կերտել է իր պետականությունը: Այս դեպքում առավելագույնս կարող է խոսք լինել ընդամենը

...միջազգային հարաբերությունների պատմությանը հայտնի չէ գեթ մեկ նախադեպ, երբ տարածքային զիջումներով կարգավորվի հանրույթի ինքնորոշման իրավունքի իրացման պատճառով ծագած հակամարտությունը:

սահմանների ճշգրտման մասին, բնականաբար՝ նախկին մետրոպոլիայի կողմից նորանկախ սուբյեկտի իրավասուբյեկտությունը ճանաչելուց հետո: Տվյալ դեպքում, սակայն, նորանկախ պետության սահմանների ուրվագիծը շեշտակիորեն փոփոխվել չի կարող⁸:

⁸ Այս համատեքստում կրկին տեղին է անդրադառնալ Արցախի սահմանադրության 142-րդ հոդվածին՝ կատարելով հետևյալ նկատառումը:

Եթե երբևէ գա այն օրը, երբ Արցախ - Ադրբեջան պե-

Այս դրույթն այնքան կարևոր է, որ արժե ևս մեկ անգամ ընդգծել. **երբևէ չի եղել այնդես, որ անկախ ղեկավարություն կերտող, ինքնուրույն ունեւ հանրույթ նախկին մեքոդոլիայի կողմից որդես միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչվելու դիմաց նրան տաւածք զիջի:**

...երբևէ չի եղել այնպես, որ անկախ պետականություն կերտող, ինքնուրույն ունեւ հանրույթ նախկին մետրոպոլիայի կողմից որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչվելու դիմաց նրան տաւածք զիջի:

Այլ կերպ ասած՝ **միջազգային իրավաբանական ղեկարարութուն չկա գեթ մեկ օրինակ, որ սեփական ղեկարարութունը կերտելու հավաքական կամքով տոգորված հանրութիւն և նախկին մեքոդոլիայի միջև փոխհամաձայնութուն ձեռք բերվի «տարածք ճանաչման փոխարեն» տրամաբանութամբ փոխզիջումների արդյունքում:** Ի դեպ, այն տեսակետը, որ հանրութիւն ինքնուրույնման իրավունքի իրացման պատճառով ծագած էքնոտարածքային հակամարտութունների կարգավորումը «ողջմիտ», պարիտետային փոխզիջումներով անհնարին

... միջազգային իրավաքաղաքական պրակտիկայում չկա գեթ մեկ օրինակ, որ սեփական պետականութունը կերտելու հավաքական կամքով տոգորված հանրութիւն և նախկին մետրոպոլիայի միջև փոխհամաձայնութուն ձեռք բերվի «տարածք ճանաչման փոխարեն» տրամաբանութամբ փոխզիջումների արդյունքում:

տական սահմանը ճշգրտելը դառնա արդիական, ապա այդ դեպքում բանակցութունների առարկա կարող է լինել առավելագույնը համաչափ տարածքային փոխանակման սկզբունքով Շահումյանի շրջանը հետ ստանալու հարցը: **Տվյալ դեպքում սկզբունքներն կարևոր է նեւ, որ Ադրբեյջանի հետ սահմանների ճգրտման դեպքում Արցախի ներկա սահմանների կոնֆիգուրացիան չի կարող զգալի փոփոխվել, իսկ տարածքը՝ դառնալ ավելի փոքր, քան հիմա:** Ահա՝ Արցախի սահմանադրութամբ 142-րդ հոդվածի տրամաբանութունը:

է, տիրապետող է քաղաքագիտության մեջ: Ըստ այդմ՝ նման հակամարտությունների պարագայում **«սարածք ծանաչման դիմաց» բանաձևը բառի բուն իմաստով աննախադեպ է և սնանկ:**

Բանն այն է, որ ազգերը, որպես կանոն, իրենց ինքնորոշման իրավունքն իրացնում են սեփական էթնոգենետիկ տարածքի վրա, այսինքն՝ այն տարածքի, որի վրա ընթացել է նրանց էթնոգենեզը, որի վրա նրանք կայացել են իբրև ազգ և որը ընկալում են իբրև հայրենիք: Այս առումով կայացած ազգի յուրաքանչյուր ներկայացուցիչ կրում է հայրենիքի տարածական պատկերը: Վերջինս նրա էթնիկական ինքնագիտակցության կարևո-

...«տարածք ծանաչման դիմաց» բանաձևը բառի բուն իմաստով աննախադեպ է և սնանկ:

րագույն բաղադրիչներից է: Հենց այդ է պատճառը, որ տվյալ դեպքում զիջում ասվածը հակասում է ինքնորոշված, սեփական պետականությունը կերտող ազ-

գի ներկայացուցիչների և ուրեմն՝ ազգի որպես հավաքականության կենսական շահերին, անդին է այն կարմիր գծից, որն այդ հանրույթն ընկալում է որպես զիջումների ռացիոնալ սահման: Այստեղից հետևություն. եթե անգամ արտաքին հարկադրող ուժի առկայության դեպքում հանրույթը զնա նման զիջումների, ապա խոսքն այդ դեպքում կարող է լինել լոկ հակամարտությունը ժամանակավորապես սառեցնելու մասին: Այն անմիջապես կբռնկվի նոր թափով այդ պարտադրող ուժի անհետացման կամ թուլացման դեպքում: Արցախյան հակամարտությունը ԽՍՀՄ կենտրոնական իշխանության թուլացման ֆոնին ասվածի վառ ապացույցն է:

Ինքնորոշման իրավունքի իրացման պատճառով ծագած էթնոտարածքային հակամարտությունների կարգավորման ուղին մեկն է. եթե նախկին մետրոպոլիային չի հաջողվում բռնի ուժով վերանվաճել ինքնորոշված հանրության տարածքը, ապա այնտեղի քաղաքական վերնախավն ու հանրությունը վաղ թե ուշ հաշտվում են իրենց նախկին գաղութի կորստի, նրա հետայսու անկախ գոյության անխուսափելիության հետ՝ հրաժարվելով ծավալապաշտական նկրտումներից: Բնականաբար, սա տևական ժամանակ պահանջող գործընթաց է, քանզի ենթադրում է կայսրապաշտական նկրտումներ ունեցող հանրության էթնոքաղաքական նպատակների և հզոր պետության մասին պատկերացումների արմատական փոխակերպում: Հարկ է նշել, որ այդպիսի փոխակերպման առաջին փուլը **ռազմի ուժի գործադրմամբ նախկին գաղութին վերափրանալու անհնարինության հետ համակերպվելն է:** Ասվածը պատմական օրինաչափություն է: Այստեղ հատկապես ընդգծենք. **հակամարտության կարգավորման փոխզիջումային հայեցակարգից անցումն առկա իրողություններն ընդունելու հենքի վրա փոխհամաձայնության հայեցակարգին նշանակում է նախևառաջ համակերպում առկա իրողությունների հետ:**

...հակամարտության կարգավորման փոխզիջումային հայեցակարգից անցումն առկա իրողություններն ընդունելու հենքի վրա փոխհամաձայնության հայեցակարգին նշանակում է նախևառաջ համակերպում առկա իրողությունների հետ:

Այստեղ հարկ է նշել, որ նման հակամարտությունները չունեն այլընտրանքային լուծումներ նաև այն պատճառով, որ ժամանակին

հակամարտության կողմ հանդիսանող ինքնորոշված հանրույթը կա՛մ բռնակցվել, կա՛մ ինքնական որոշմամբ միացվել է օտար ընկալվող պետությանը: Բնականաբար, նման պարտադրված միությունը կենսունակ լինել չի կարող: Հենց այդպիսին է արցախյան հակամարտության բնույթը: Եվ ուրեմն՝ Արցախի տարածքի հանդեպ անդրկովկասցի թուրքերի հանիրավի նկրտումներով պայմանավորված հակամարտության պարագայում «այլընտրանքային» մոտեցումներ լինել չեն կարող: Ի դեպ, **«Արցախի սարածփի հանդեպ անդրկովկասցի թուրքերի հանիրավի նկրտումներով դայմանավորված հակամարտություն»** ասվածը թեև չափից ավելի երկարաշունչ է՝ գործնականում կիրառելի եզրույթ լինելու համար, այդուհանդերձ, մեր համոզմամբ, ճշգրիտ է արտահայտում հակամարտության կարգավորման ադրբեջանական պատկերացումը: Անդրկովկասցի թուրքերին հարկավոր է Արցախի տարածքը, այլ ոչ թե այդ տարածքի վրա ապրող արցախահայությունը: Այս համատեքստում արցախահայությանը լայն ինքնավարություն տրամադրելու մասին Բաքվից մերթ ընդ մերթ հնչող խոստումները ոչ այլ ինչ են, եթե ոչ հայաստանաբնակ հայությանը և միջազգային հանրությանը մոլորեցնելու փորձ:

Նման պայմաններում էական է դառնում հայկական կողմի սկզբունքային և վճռական կեցվածքի անհրաժեշտությունը: Որպեսզի անդրկովկասցի թուրքերի առավելապաշտական դիրքորոշումները տեղի տան, նրանք նախևառաջ պետք է համակերպվեն Արցախի վերագա-

ղութացման անհնարինության հետ: Այդ համակերպման համար, ինչպես արդեն վերը նշվեց, տևական ժամանակ է հարկավոր: Ըստ այդմ՝ հակամարտությունը նույնպես լինելու է տևական: Կենսականորեն կարևոր է մեր հանրությանը հոգեբանորեն պատրաստելը, որ հակամարտությունը տևական է լինելու: Այդ դեպքում միայն մեր հանրությունը կլինի բարոյահոգեբանորեն տոկուն: ***Միայն այդպես՝ ազգովի բարոյահոգեբանորեն տոկուն լինելով, հնարավոր կլինի ստիպել անդրկովկասցի թուրքերին համակերպվել առկա իրողությունների հետ՝ ձեռք բերելով փոխհամաձայնություն՝ առանց տարածքներ զիջելու սրամաքանությանը փոխզիջումների:*** Ավելին՝ մեր հանրության այդ բարոյահոգեբանական տոկունությունն ազգ-բանակի վերածվելու գրավականներից է:

Փաստ է. անկախացած ազգերը, որոնք ինքնակազմակերպվել և ձևավորել են պետական ինստիտուտներ, երբևէ կամավոր չեն հրաժարվել իրենց այդ ձեռքբերումներից, իսկ նախկին գաղութարարները դժվարությամբ, սակայն, ի վերջո, հրաժարվել են այդ ըմբոստացած ազգերին գաղութացնելու փորձերից՝ ճանաչելով նրանց անկախությունը: Այդպիսին է պատմության տրամաբանությունը, և Արցախը բացառություն չի կարող: Ի դեպ, համակերպումն առկա իրողությունների հետ անդրկովկասցի թուրքերի շրջանում կարծես թե աստիճանաբար հասունանում

Միայն այդպես՝ ազգովի բարոյահոգեբանորեն տոկուն լինելով, հնարավոր կլինի ստիպել անդրկովկասցի թուրքերին համակերպվել առկա իրողությունների հետ՝ ձեռք բերելով փոխհամաձայնություն՝ առանց տարածքներ զիջելու տրամաբանությամբ փոխզիջումների:

է: Ահա թե ինչ է ասում Ադրբեջանի Մեջլիսի նախկին խոսնակ Ռ. Գուլիևը. «Հայերը երբեք չեն ստորագրի այնպիսի մի փաստաթուղթ, որում հաստատված չլինի Ղարաբաղի անկախությունը... Անգամ եթե պատկերացնենք, որ Հայաստանի ինչ-որ նախագահ կստորագրի ինչ-որ փաստաթուղթ՝ դեմ գնալով Ժողովրդի կամքին, ապա այն երբեք չի հաստատի խորհրդարանը, Ժողովուրդը կհեռացնի նման առաջնորդին»⁹:

Առաջին հայացքից ողջ վերը նշվածը կարող է անելանելիության տպավորություն թողնել: Կայուն և կանխատեսելի խաղաղության հեռանկարը ցանկացած բանական մարդու ցանկությունն է: Սակայն հայերի համար չկա ավելի վտանգավոր բան, քան ինքնախաբեությունը: Ինքնախաբեությունը կարող է բերել ազգային աղետի, ինչպես այն մեկ անգամ արդեն եղել է: Ազգային աղետների ժամանակները հայոց համար վերջապես պետք է դառնան անցյալ, անդառնալի անցյալ: Իսկ դրա համար հարկավոր է իրերը կոչել իրենց անուններով, իրականությունն ընկալել այնպիսին, ինչպիսին այն կա: Իրականության համարժեք ընկալումն է միայն գրավականը՝ նոր՝ հայոց համար առավել ցանկալի իրականություն կերտելու համար: Եվ ուրեմն՝ շատ կարևոր է հանրային գիտակցության մեջ ամրապնդել հետևյալ գաղափարը. ***եթե Ադրբեջանի ղեկավարությունը ձգձուռն է իր Ժողովրդին լուրջ վտանգի նկատմամբ, ապա հայոց համար իրականացնելու է միայն զինադիմադրությունը***:

⁹ http://qafqazinfo.az/%E2%80%9CM%C6%8FN_AZ%C6%8FRBAYCANA_YAXINLA%C5%9EANDA,_B%C6%8FZIL%C6%8FRININ_YUXUSU_QA%C3%87IR%E2%80%9D_%E2%80%93M%C3%9CSAHIB%C6%8F-2712-xeber.html

**մի, ադա մեր առջև ծառացած է անհամեմատ
ավելի հեշտ խնդիր՝ ամրադնդել հաղթանա-**

կը: Հետևաբար՝ ի սկզբանե մենք
թշնամու հանդեպ ունենք բարոյա-
հոգեբանական առավելություն:
Հարկ է հաշվի առնել նաև, որ
Ադրբեջանի էներգակիր պաշար-
ների նվազմամբ կվերանան նաև
նրա ծավալապաշտական հա-
վակնությունների իրականացման
նախադրյալները, և ադրբեջանական հանրույթը
կդառնա ավելի իրատես: Իսկ մինչ այդ հետևո-
ղական ներքին քարոզչությամբ հարկավոր է
մեր հասարակությանը հոգեպես պատրաստել
արտաքին ճնշումներին դիմակայելուն:

**Անդրկովկասի թուրքերի հարևանությամբ
մենք ստիպված ենք ադրել, ադրել՝ զստելով
այդ հանրույթի թշնամանքի դրոշմները,
ադրել՝ խաղաղություն տարածելով, ադրել՝
ուժ հակադրելով:** Հայոց դեմքումնենք ղեկավար
է դասնեցված լինեն նման հարևաններից հու-
սալիորեն դաժնադանված դեմքեր սահ-
մանով: Այդ դեմքում Բաքվում վաղ թե ուշ, ի
վերջո, կհամակերպվեն, որ Արցախն իր ներկա
սահմանով այլևս երբեք իրենցը չի լինելու: Սա
սկզբունքորեն անխուսափելի
է: Բացի այդ համակերպումից
որևէ այլ լուծում չկա: Այլ տար-
բերակ չկա: Կարծում եմ՝ մեր
խնդիրն է ահա այս ճշմարտու-
թյունը հասու դարձնել Հայաստա-
նի յուրաքանչյուր քաղաքացու,

...եթե Ադրբեջանի ղեկավա-
րությունը ձգտում է իր ժո-
ղովրդին պատրաստել նվա-
ճողական պատերազմի, ապա
մեր առջև ծառացած է անհա-
մեմատ ավելի հեշտ խնդիր՝
ամրապնդել հաղթանակը:

Անդրկովկասի թուրքերի
հարևանությամբ մենք ստիպ-
ված ենք ադրել, ադրել՝ զստե-
լով այդ հանրույթի թշնամանքի
պոռթկումները, ադրել՝ խա-
ղաղություն պարտադրելով,
ադրել՝ ուժ հակադրելով:

Հայոց պետությունները պետք է պատճենված լինեն նման հարևաններից հուսալիորեն պաշտպանված պետական սահմանով: Այդ դեպքում Բաքվում վաղ թե ուշ, ի վերջո, կհամակերպվեն, որ Արցախն իր ներկա տարածքով այլևս երբեք իրենցը չի լինելու: Սա սկզբունքորեն անխուսափելի է: Բացի այդ համակերպումից որևէ այլ լուծում չկա: Այլ տարբերակ չկա:

որպեսզի այն վերածվի հանրության շրջանում տիրապետող հանդմունքի: Այդ դեպքում միայն մեր հանրությունը կլինի բարոյահոգեբանորեն տոկուն:

2.2. Ադրբեջանցի «փախստականների» վերադարձն Արցախ վտանգավոր է

Խնդրո առարկայի համաշարուն արժե նաև անդրադառնալ ալսպես կոչված «ադրբեջանցի փախստականների»¹⁰ վերադարձի թեմային, որը բանակցաին գործընթացում քննարկվող խնդիրներից է:

Առավել քան ակնհայտ է, որ անդրկովկասցի թուրքերի՝ Արցախ վերադառնալը վտանգավոր է և անխուսափելիորեն հանգեցնելու է Արցախում հակամարտության նոր օջախների ձևավորմանը: Հետևաբար՝ **հարկավոր է բանակցային գործընթացում մշտապես արդիական տաիել Ադրբեջանից գաղթած հայության**

...հարկավոր է բանակցային գործընթացում մշտապես արդիական տաիել Ադրբեջանից գաղթած հայության իրավունքների պաշտպանության, մասնավորապես՝ նրանց կրած նյութական կորստի և բարոյական վնասի փոխհատուցման խնդիրը:

¹⁰ Հարկ է նշել, որ արցախյան հակամարտության համատեքստում փախստական կարող են համարվել բացառապես հայերը, ովքեր ապրում էին նախկին Ադր. ԽՍՀՄ-ում և բռնի վտարվեցին իրենց բնակության վայրերից: Իսկ ադրբեջանցի փախստական որպես այդպիսին չկա և չի կարող լինել մի շարք պատճառներով: ՀԽՍՀ-ում ապրող ադրբեջանցիների մի մասն իրենց համար հարմար պայմաններով փոխանակել է բնակարանները, մյուս մասն էլ փոխհատուցում ստացել Սպիտակի երկրշարժից հետո: Ներկայիս Արցախի տարածքում խորհրդային տարիներին բնակված ադրբեջանցիները ևս չեն կարող փախստականներ համարվել, քանի որ նախ՝ նրանք գրեթե բոլորը մասնակից են եղել Արցախի շրջափակմանը և նրա դեմ ծավալված պատերազմին, այսինքն՝ չեն եղել խաղաղ բնակիչներ, երկրորդ՝ նրանք այսօր ապրում են իրենց ազգային պետության սահմանների ներսում: Այս մասին առավել մանրամասն տես **Манасян. А., Карабахский конфликт: ключевые понятия и хроника, Ереван, 2005, стр. 22-23.**

իրավունքների լաբստանության, մասնավորապես՝ նրանց կրած նյութական կորստի և բարոյական վնասի փոխհատուցման խնդիրը:

Տվյալ դեպքում նախևառաջ հարկավոր է շեշտել հետևյալը. նախկին ԼՂԻՄ-ից դուրս գտնվող և այժմ արդեն մայր հայրենիքին վերափնտեգրված տարածքներում ներկայումս բնակություն են հաստատել Ադրբեջանից տեղահանված մեր հայրենակիցները: Ի դեպ, զուտ դիվանագիտա-

կան նպատակահարմարությունից ելնելով՝ Ադրբեջանի տարածքից բռնի տեղահանված մեր հայրենակիցների հավաքականությանը տեղին է անվանել ադրբեջանահայություն: ***Եվ քանի որ անդրկովկասի թուրքերի վերադարձն Արցախ նշանակում է նոր հակամարտություն և այդ իսկ պատճառով ժխտելի է ի սկզբանե, իսկ հայ փախստականների վերադարձն Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներ՝ պարզապես անհնարին, ապա ադրբեջանահայության փոխհատուցման միակ հնարավոր ձևն Արցախի ներկա տարածքում նրանց գոյությունն իբրև իրավաբաղաժան իրողություն լեգիտիմացնելն է:***

Եվ քանի որ անդրկովկասի թուրքերի վերադարձն Արցախ նշանակում է նոր հակամարտություն և այդ իսկ պատճառով ժխտելի է ի սկզբանե, իսկ հայ փախստականների վերադարձն Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներ՝ պարզապես անհնարին, ապա ադրբեջանահայության փոխհատուցման միակ հնարավոր ձևն Արցախի ներկա տարածքում նրանց գոյությունն իբրև իրավաբաղաժան իրողություն լեգիտիմացնելն է:

ջանահայության փոխհատուցման միակ հնարավոր ձևն Արցախի ներկա սահմանում նրանց գոյությունն իբրև իրավաբաղաժան իրողություն լեգիտիմացնելն է: Մանրամասները:

Արցախյան ազատամարտի արդյունքում ազատագրվեց հայոց հայրենիքի մի մասը, որի վրա վերջին տասնամյակներին խորհրդային Ադրբեջանի իշխանությունները հիմնել էին բազ-

մաթիվ թրքանուն բնակավայրեր, որտեղ բնակեցրել էին անդրկովկասցի թուրքերի: Արցախյան շարժման սկզբի՝ 1988-ի դրությամբ խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ-ի շուրջ ձևավորել էին թրքաբնակ բնակավայրերի կենդանի շղթա, որով, բառիս բուն իմաստով, օղակել էին հայկական ինքնավարությունը: Բնականաբար, այդ ամենն Արցախն աստիճանաբար հայաթափելուն նպատակաուղղված քաղաքականություն էր: Պատերազմի տարիներին այդ բնակավայրերը վերածվեցին ադրբեջանական զինուժի հենակետերի և պատերազմի տրամաբանության համաձայն՝ ոչնչացվեցին Արցախի ինքնապաշտպանության ուժերի կողմից, իսկ թուրք բնակչությունը՝ իր ղեկավարության ագրեսիվ արկածախնդրության ակտիվ և անմիջական մասնակիցը, պարտված ադրբեջանական ուժերի հետ միասին լքեց դրանք:

Հետևաբար՝ միջազգային հարթակներում հայկական կողմերը պետք է զարգացնեն հետևյալ դիրքորոշումը: **Այն, որ ներկայիս Արցախի տարածքում անդրկովկասցի թուրքեր չկան, հենց Ադրբեջանի տեղական մեղքն է:**

Այն, որ ներկայիս Արցախի տարածքում անդրկովկասցի թուրքեր չկան, հենց Ադրբեջան պետության մեղքն է, քանզի հենց Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի պատճառով են նրանք լքել Արցախի տարածքը: Ընդ որում՝ այդ բնակչության մի մասը, այս կամ այն չափով մասնակիցը լինելով

Արցախի դեմ ռազմական գործողություններին և շրջափակմանը, եղել է հակամարտության կողմ: Այժմ Արցախի տարածքում բնակվում են ադրբեջանահայ փախստականներ, որոնք ադրբեջանական ագրեսիայի զոհերն են: Ադրբեջանում պետականորեն ձևավորված հայատյացության մթնոլորտն անհնարին է դարձնում ադրբեջանահայերի վերադարձն Ադրբեջան: Այս մարդիկ, բնակություն հաստատելով Արցախում, իրացրել են իրենց կյանքի հիմնարար իրավունքը, իսկ Արցախում վերահաստատվելուց հետո նրանց ձեռք բերած անշարժ գույքը կրած նյութական վնասի փոխհատուցման տարբերակ է: Ըստ այդմ՝ Արցախում հաստատված ադրբեջանահայության իրավունքներն անօտարելի են և արցախահայության ինքնորոշման իրավունքի հիմնախնդրի մասն են կազմում:

է, քանզի հենց Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի լուրջագործը են նրանք լինել Արցախի տարածքը: Ընդ որում՝ այդ բնակչության մի մասը, այս կամ այն չափով մասնակիցը լինելով Արցախի դեմ ռազմական գործողություններին և շրջափակմանը, եղել է հակամարտության կողմ: Այժմ Արցախի տարածքում բնակվում են ադրբեջանահայ փախսականներ, որոնք ադրբեջանական ագրեսիայի զոհերն են: Ադրբեջանում ղեկավարեն ձևավորված հայաստանցիության մթնոլորտն անհնարին է դարձնում ադրբեջանահայերի վերադարձն Ադրբեջան: Այս մարդիկ, բնակություն հաստատելով Արցախում, իրացրել են իրենց կյանքի հիմնաբար իրավունքը, իսկ Արցախում վերահաստատվելուց հետո նրանց ձեռք բերած անշարժ գույքը կրած նյութական վնասի փոխհատուցման տարբերակ է: Ըստ այդմ՝ Արցախում հաստատված ադրբեջանահայության իրավունքներն անօտարելի են և արցախահայության ինքնորոշման իրավունքի հիմնախնդրի մասն են կազմում:

Ամփոփում

2016-ի ապրիլի 2-ին Ադրբեջանը սանձազերծեց երկրորդ ագրեսիան ինքնորոշված Արցախի դեմ: Այն առաջինի նման ձախողվեց: Արցախի Պաշտպանության բանակն ընդամենը երեք և կես օրվա ընթացքում կասեցրեց ադրբեջանական խմբավորումների հարձակումը պետական սահմանին՝ պաշտպանության առաջին էջելոնում կամ դասակային խորությունում, ոչնչացրեց հակառակորդի կուտակումներն իրենց կենտրոնացման շրջաններում ու ծավալման բնագծերում և կրկին անգամ հարկադրեց պաշտոնական Բաքվին հրադադար խնդրել: Ըստ այդմ՝ Արցախի Պաշտպանության բանակը երկրորդ անգամ արյամբ վերահաստատեց Ադրբեջանի հետ իր պետական սահմանը:

**Ձախողված, բայց իր մեղքը
չընդունող ագրեսորին Արցա-
խը զիջելու տարածքներ չունի:**

Հատկապես ընդգծենք. իր երկրորդ ագրեսիայով Ադրբեջանը լեգիտիմացրեց Արցախի ներկա սահմանը: Ավելին՝ ադրբեջանական երկրորդ ագրեսիան հետ մղելու փաստը վերջնականապես լեգիտիմացնում է նաև տարածքային զիջումների անընդունելի լինելու պաշտոնական Ստեփանակերտի դիրքորոշումը: **Ձախողված, բայց իր մեղքը չընդունող ագրեսորին Արցախը զիջելու տարածքներ չունի:** Պաշտոնական Ստեփանակերտի այս առողջ դիրքորոշումն անայլընտրանքային է և ագրեսորին սանձողի

լեզվի տիմությամբ հիմնավորված:

Հարափոփոխ աշխարհում հայկական երկու ղեկավարությունների, լայն առումով հայադասական Հայաստանի անվտանգության կայուն երաշխիքներից մեկը սարածին է՝ ռազմավարական առավելությունը սվող սարածին: Առավել քան ակնհայտ է, որ մենք ստիպված ենք զարգանալ մեծական արտաքին վսանգի ղայմաններում, և այդ ղարագայում Ադրբեջանի հեռ

Հարափոփոխ աշխարհում հայկական երկու պետությունների, լայն առումով հայապատկան Հայաստանի անվտանգության կայուն երաշխիքներից մեկը տարածքն է՝ ռազմավարական առավելություն տվող տարածքը: Առավել քան ակնհայտ է, որ մենք ստիպված ենք զարգանալ մշտական արտաքին վտանգի պայմաններում, և այդ պարագայում Ադրբեջանի հետ Արցախի պետական սահմանի ներկայիս կոնֆիգուրացիան, Արցախի 11432.66 քառ. կմ. սահմանադրորեն ամրագրված տարածքը հայկական երկու պետությունների կենսունակությունն ապահովող հիմնական գրավականն են:

Արցախի ղեական սահմանի ներկայիս կոնֆիգուրացիան, Արցախի 11432.66 քառ. կմ. սահմանադրորեն ամրագրված սարածին հայկական երկու ղեկությունների կենսունակությունն ապահովող հիմնական գրավականն են: Արցախը նախկին ԼՂԻՄ-ի տարածքով, իր կիսաանկլավային վիճակով իբրև պետություն կենսունակ լինել չի կարող: Առանց Արցախի ներկայիս՝ նրա սահմանադրությամբ ամրագրված 11432.66 քառ. կմ տարածքի կենսունակ լինել չի կարող և Հայաստանի Հանրապետությունը՝ Նախիջևանի գործոնի պատճառով:

Այսպիսով՝ **մադրիդյան**

սկզբունքներն իրավամբ կարելի է որակել որդես կոնֆլիկտածին, քանզի դրանց կենսագործման դեպքում հակամարտությունը կթևակոխի նոր՝ հայկական կողմի համար վտանգավոր

փուլ: Հարկ է հստակ գիտակցել. առանց Արցախի ներկա տարածքի չկա՝ հայկական ռազմաքաղաքական տարածք, չկա՝ հայոց պետականություն իբրև աշխարհաքաղաքական իրողություն, չկա՝ կենսունակ պետություն կերտելու հեռանկար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղաբաբյան Ա., Ղարիբյան Ա., Արցախ, Арцах, Artsakh, Երևան, ԵՊՀ հրատ, 2014:
2. Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը. վերլուծական և փաստագրական նյութերի ընտրանի, Երևան, Հայոց համաշխարհային գործակալություն, 2006:
3. Միրաբյան Վ., Սոցիալական դիրքորոշումների ձևավորումը զանգվածային լրատվամիջոցներով, Երևան, ԵՊՀ հրատ, 2015:
4. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997:
5. Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ. Փաստաթղթեր և նյութեր, Բանբեր Հայաստանի արխիվների 1-2, Երևան, 1993:
6. Ռազմավարության և անվտանգության հարցեր, Արարատ ռազմավարագիտական կենտրոն, Երևան, 2007:
7. Армения и Азербайджан на перепутье “ни мира, ни войны”.- Ереван, Исследовательский центр “Регион” журналистов-расследователей, 2005.
8. Берковиц Л., Агрессия: причины, последствия и контроль, СПб, Прайм — ЕВРОЗНАК, Издательский дом НЕВА, 2002.
9. Изард К., Психология эмоций, СПб, Питер, 1999.

10. Мелик – Шахназарян Л., О войне и победе. Ереван, Айагитак, том 1-2, 2015.
11. Налчаджян А., Этническая виктимология и психоистория этноцида, Ереван, Авторское издание, 2011.
12. Налчаджян А., Этнопсихологическая само-защита и агрессия. Ереван, Огебан, 2000.
13. Налчаджян А., Этническая характерология, Ереван, Огебан, 2001.
14. Сидорина Т., Полянников Т., Национализм: теории и политическая история, Москва, Издательский дом ГУ ВШЭ, 2006.
15. Bandura A., Aggression: A social learning anaiysis, N. J., 1973.
16. Berkowitz L., Aggression: A social psychological analysis: New York, 1962.
17. Horowitz D., Ethnic groups in conflict, Berk., 1985.

Բովանդակություն

Հեղինակի կողմից.....	3
1. Հայ-թուրքական հակամարտության «ցիկլային» բնույթը	10
1.1. Էթնոքաղաքական շահերի հակասականությունը՝ հայ-թուրքական հակամարտության ցիկլայնության պատճառ.....	14
1.2. Հայերի և թուրքերի միջև քաղաքակրթական անհամատեղելիության հիմնախնդիրն ու հայ-թուրքական հակամարտության ցիկլայնությունը.....	18
Հայաստյացությունը սոցիոլոգիական տվյալներում	20
Հայաստյացության դրսևորումներն անդրկովկասցի թուրքերի բանահյուսությունում.....	23
Ռամիլ Սաֆարովի հերոսացման փաստը՝ քաղաքակրթական անհամատեղելիության ապացույց.....	28
2. Տարածքային զիջումների բացառումը հիմնավորող իրավաքաղաքական փաստարկները	34
2.1 Վճռորոշ խոսքն Արցախինն է.....	34
Արցախի ներկա տարածքի սահմանադրորեն ամրագրված լինելու փաստարկը.....	39
Իսկ ի՞նչ է հուշում միջազգային փորձը	49
2.2. Ադրբեջանցի «փախստականների» վերադարձն Արցախ վտանգավոր է	59
Ամփոփում	63
Գրականության ցանկ	66

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ**

Դավիթ Զամալյան

**Թուրք - ադրբեջանական
վտանգը և Հայաստանի
անվտանգության
հիմնախնդիրները**

Շապիկի ձևավորումը՝ Ա. Աղաբաբյանի
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 25.12.2016:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 4.375:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am